

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

«ԱՐ ՖԻՇ»

ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՆՈՐԱՄԱՐԳԻ ԶԿՆԱԲՈՒԾԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ
ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԱՎԱԶԱՆՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՅՏ

Տնօրեն՝

Ա. Մանուկյան

Երևան 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

| | Էջ |
|--|----|
| ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ ԵՎ ՏԵՐՄԻՆՆԵՐ | 3 |
| ՆԱԽԱԳԾՄԱՆ ՆՈՐՄԱՏԻՎ-ԻՐԱՎԱԿԱՆ ՀԵՆՔԸ | 5 |
| 1. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆՈՒՄԸ ԵՎ ՆՊԱՏԱԿԸ | 8 |
| 2. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ | 15 |
| Ռեյիեֆ, երկրաձևաբանություն, արտածին գեոդինամիկ երևույթներ, սեյսմիկ պայմաններ | 15 |
| Շրջանի կլիման | 17 |
| Մթնոլորտային օդ | 20 |
| Ջրային ռեսուրսներ | 21 |
| Հողեր | 25 |
| Բուսական և կենդանական աշխարհ | 27 |
| Վտանգված էկոհամակարգեր, բնության հատուկ պահպանվող տարածքներ | 30 |
| 3. ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ | 34 |
| Ենթակառուցվածքներ | 34 |
| Պատմության, մշակութային հուշարձաններ | 39 |
| 4. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ | 40 |
| 5. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ | 44 |
| 6. ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐ | 48 |
| Օգտագործված գրականության ցանկ | 56 |
| Հավելված 1. Հայցվող տարածքի կոորդինատները | 57 |
| Հավելված 2. Հողերի սեփականության վկայականների պատճենները | 58 |
| Հավելված 3. Նորամարզի ձկնաբուծարանի ենթակառուցվածքների տեղաբաշխման սխեմատիկ հատակագիծ | 61 |

ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՄԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ ԵՎ ՏԵՐՄԻՆՆԵՐ

Շրջակա միջավայր` բնական և մարդածին տարրերի (մթնոլորտային օդ, ջրեր, հողեր, ընդերք, լանդշաֆտ, կենդանական ու բուսական աշխարհ, ներառյալ` անտառ, բնության հատուկ պահպանվող տարածքներ, բնակավայրերի կանաչ տարածքներ, կառույցներ, պատմության և մշակույթի հուշարձաններ) և սոցիալական միջավայրի (մարդու առողջության և անվտանգության), գործոնների, նյութերի, երևույթների ու գործընթացների ամբողջությունը և դրանց փոխազդեցությունը միմյանց ու մարդկանց միջև

Շրջակա միջավայրի վրա ազդեցություն` հիմնադրությամբ փաստաթղթի գործողության կամ նախատեսվող գործունեության իրականացման հետևանքով շրջակա միջավայրի և մարդու առողջության վրա հնարավոր փոփոխությունները

Նախատեսվող գործունեություն` շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցություն ունեցող ուսումնասիրություն, արտադրություն, կառուցում, շահագործում, վերակառուցում, ընդլայնում, տեխնիկական և տեխնոլոգիական վերազինում, վերապրոֆիլավորում, կոնսերվացում, տեղափոխում, լուծարում, փակում

Նախագծային փաստաթուղթ` նախատեսվող գործունեության տեխնիկական զեկույց, տեխնիկատնտեսական հիմնավորում, տեխնիկատնտեսական հաշվարկ, ճարտարապետաշինարարական նախագիծ

Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության նախնական փուլ` հիմնադրությամբ փաստաթղթի կամ նախատեսվող գործունեության հայտի ուսումնասիրության և վերլուծության իրականացման արդյունքում համապատասխան որոշման կայացման գործընթաց.

Բույսերի Կարմիր գիրք` միջազգային պահանջները բավարարող համահավաք փաստաթուղթ, որում գրանցվում են տեղեկություններ հազվագյուտ, անհետացման եզրին գտնվող բույսերի և համակեցությունների կարգավիճակի, աշխարհագրական տարածվածության, էկոլոգիական պայմանների, կենսաբանական առանձնահատկությունների, ներկա վիճակի և պահպանման միջոցառումների մասին

Կենդանիների Կարմիր գիրք` միջազգային պահանջները բավարարող համահավաք փաստաթուղթ է, որում գրանցվում են տեղեկություններ հազվագյուտ, անհետացման եզրին գտնվող կենդանիների կարգավիճակի, աշխարհագրական տարածվածության,

Էկոլոգիական պայմանների, կենսաբանական առանձնահատկությունների ներկա վիճակի և պահպանման միջոցառումների մասին

Հող` երկրի մակերևույթում բիոտիկ, աբիոտիկ և մարդածին գործոնների երկարատև ազդեցության արդյունքում առաջացած ինքնուրույն բնագիտապատմական հանքաօրգանական բնական մարմին` կազմված կոշտ հանքային և օրգանական մասնիկներից, ջրից ու օդից և ունի բույսերի աճի ու զարգացման համար համապատասխան պայմաններ ստեղծող յուրահատուկ գենետիկամորֆոլոգիական հատկանիշներ ու հատկություններ

Հողի բերրի շերտ` հողային ծածկույթի վերին շերտի բուսահող, որն օգտագործվում է հողերի բարելավման, կանաչապատման, ռեկուլտիվացման նպատակներով

Ռեկուլտիվացում` խախտված հողերի վերականգնմանն ուղղված (օգտագործման համար պիտանի վիճակի բերելու) միջոցառումների համալիր, որը կատարվում է 2 փուլով` տեխնիկական և կենսաբանական

Ազդակիր համայնք` շրջակա միջավայրի վրա հիմնադրությամբ փաստաթղթի կամ նախատեսվող գործունեության հնարավոր ազդեցության ենթակա համայնքի (համայնքների) բնակչություն` ֆիզիկական և (կամ) իրավաբանական անձինք

Խախտված հողեր` առաջնային տնտեսական արժեքը կորցրած և շրջակա միջավայրի վրա բացասական ներգործության աղբյուր հանդիսացող հողեր

Ջրօգտագործում` ջրային ռեսուրսից ջուր վերցնելը, այդ թվում` ստորերկրյա քաղցրահամ ջուր արդյունահանելը կամ այլ եղանակով նվազեցնելը, ջրի կուտակումը, ջրային հոսքի խոչընդոտումը կամ շեղումը, ջրային ռեսուրսի աղտոտումը, ջրային ռեսուրսի մեջ կեղտաջրերի արտանետումը, վնասակար նյութերի կուտակումն այնպիսի եղանակով, որը կարող է վնասակար ազդեցություն ունենալ ջրային ռեսուրսի վրա, ինչպես նաև ջրային ռեսուրսի հատակների, ափերի, հոսքի կամ հատկությունների փոփոխումը

Ջրօգտագործման թույլտվություն` փաստաթուղթ, որը ներառում է ջրային ռեսուրսից ջրառի, այդ թվում` ստորերկրյա քաղցրահամ ջրերի արդյունահանման, կրկնակի (երկրորդային) ջրօգտագործման և ջրի վերադարձի հետ առնչվող անձանց իրավունքներն ու պարտականությունները

ՆԱԽԱԳԾՄԱՆ ՆՈՐՄԱՏԻՎ-ԻՐԱՎԱԿԱՆ ՀԵՆՔԸ

Ծրագրավորվող աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտը կազմելիս ընկերությունն առաջնորդվել է բնապահպանական օրենսդրության պահանջներով, որոնք ամրագրված են հետևյալ իրավական ակտերում.

- ՀՀ Հողային օրենսգիրք (ՀՕ-185, 02.05.2001թ.), որը սահմանում է հողային հարաբերությունների պետական կարգավորման կատարելագործման, հողի տնտեսավարման տարբեր կազմակերպական-իրավական ձևերի զարգացման, հողերի բերրիության, հողօգտագործման արդյունավետության բարձրացման, մարդկանց կյանքի ու առողջության համար բարենպաստ շրջակա միջավայրի պահպանման և բարելավման, հողի նկատմամբ իրավունքների պաշտպանության իրավական հիմքերը:
- ՀՀ Ջրային օրենսգիրք (ՀՕ-373, 04.06.2002թ.), որով կարգավորվում են ջրային ռեսուրսների և ջրային համակարգերի, այդ թվում՝ ջրամատակարարման, ջրահեռացման համակարգերի տնօրինման, տիրապետման, օգտագործման և պահպանման ոլորտում ծագող հարաբերությունները:
- ՀՀ Անտառային օրենսգիրք (ՀՕ-211, 24.10.2005թ.), որը կարգավորում է ՀՀ անտառների և անտառային հողերի կայուն կառավարման՝ պահպանության, պաշտպանության, վերականգնման, անտառապատման և արդյունավետ օգտագործման, ինչպես նաև անտառների հաշվառման, մոնիթորինգի, վերահսկողության և անտառային հողերի հետ կապված հարաբերությունները:
- «Թափոնների մասին» ՀՀ օրենք (ՀՕ-159-Ն, 24.11.2004թ.), որը կարգավորում է թափոնների հավաքման, փոխադրման, պահման, մշակման, օգտահանման, հեռացման, ծավալների կրճատման և դրանց հետ կապված այլ հարաբերությունների, ինչպես նաև մարդու առողջության և շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելման իրավական և տնտեսական հիմքերը:
- «Բուսական աշխարհի մասին» ՀՀ օրենք (ՀՕ-22, 23.11.1999թ.), որը սահմանում է պետական քաղաքականությունը բնական բուսական աշխարհի գիտականորեն հիմնավորված պահպանության, պաշտպանության, օգտագործման և վերարտադրության բնագավառում:

- «Կենդանական աշխարհի մասին» ՀՀ օրենք (ՀՕ-52, 03.04.2000թ.), որը սահմանում է Հայաստանի Հանրապետության տարածքում կենդանական աշխարհի վայրի տեսակների պահպանության, պաշտպանության, վերարտադրության և օգտագործման պետական քաղաքականությունը:
- «Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենք (ՀՕ-121, 11.10.1994թ.), որի առարկան մթնոլորտային օդի մաքրության ապահովման, մթնոլորտային օդի վրա վնասակար ներգործությունների նվազեցման ու կանխման բնագավառում հասարակական հարաբերությունների կարգավորումն է:
- «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենք (ՀՕ-211, 27.11.2006թ.), որը կարգավորում է Հայաստանի Հանրապետության բնության հատուկ պահպանվող տարածքների՝ որպես բնապահպանական, տնտեսական, սոցիալական, գիտական, կրթական, պատմամշակութային, գեղագիտական, առողջապահական, ռեկրեացիոն արժեք ներկայացնող էկոհամակարգերի, բնության համալիրների ու առանձին օբյեկտների բնականոն զարգացման, վերականգնման, պահպանության, վերարտադրության և օգտագործման պետական քաղաքականության իրավական հիմունքները:
- «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենք (ՀՕ-110, 21.06.2014թ.), որը կարգավորում է Հայաստանի Հանրապետությունում շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումների, շրջակա միջավայրի վրա ազդեցության պետական փորձաքննության ոլորտի հասարակական հարաբերությունները:
- ՀՀ կառավարության 14.12.2017թ.-ի թիվ 1643-Ն որոշում, որը կիրառվում է Հայաստանի Հանրապետության տարածքում խախտված հողերի հաշվառման, հողաշինարարական, քարտեզագրման, կանխատեսվող ու իրականացման ենթակա ռեկուլտիվացման աշխատանքների նախագծման, ռեկուլտիվացման, ռեկուլտիվացված հողերի նպատակային նշանակության ուղղությունների որոշման, ինչպես նաև նպատակային ու գործառական նշանակությանը համապատասխան՝ դրանց հետագա օգտագործման ժամանակ:
- ՀՀ կառավարության 14.08.2014թ.-ի N781-Ն որոշում, որը սահմանում է սահմանում է Հայաստանի Հանրապետության բուսական աշխարհի օբյեկտների

պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման ընթացակարգը:

- ՀՀ կառավարության 20.01.2005թ.-ի N64-Ն որոշում, որով հաստատվել են ջրաէկոհամակարգերի սանիտարական պահպանման, հոսքի ձևավորման, ստորերկրյա ջրերի պահպանման, ջրապահպան, էկոտոնի և անօտարելի գոտիների տարածքների սահմանման չափորոշիչները:
- ՀՀ կառավարության 27.05.2015թ.-ի N764-Ն որոշում, որով հաստատել շրջակա միջավայրի վրա հնարավոր տնտեսական վնասի գնահատման և հատուցման կարգը:
- ՀՀ կառավարության 29.01.2010թ.-ի N71-Ն որոշում, որով հաստատվել է ՀՀ կենդանիների Կարմիր գիրքը,
- ՀՀ կառավարության 29.01.2010թ.-ի N72-Ն որոշում, որով հաստատվել է ՀՀ բույսերի Կարմիր գիրքը,
- ՀՀ կառավարության 14.08.2008թ.-ի N967-Ն որոշում, որով հաստատվել է ՀՀ բնության հուշարձանների ցանկը:

1. ՆԱԽԱՏԵՄՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆՈՒՄԸ ԵՎ ՆՊԱՏԱԿԸ

Նորամարզի ձկնաբուծական տնտեսության արտադրողականությունը կազմելու է տարեկան մոտ 95 տոննա, որի համար հայցվող մոտ 20հա տարածքում (նկար 1-2) նախատեսվում է կառուցել վեց ավազան (դրանցից երկուսը՝ մանրածկան աճեցման արտադրամասի համար), կերի պահեստ, նյութատեխնիկական պահեստ, անձնակազմի համար անհրաժեշտ բնակելի շինություն, պարիսպ և այլն:

Ձկնաբուծարանի կառուցման համար հայցվող տարածքը գտնվում է Նորամարզ բնակավայրից մոտ 1.8կմ և Արաքսավան բնակավայրից՝ մոտ 3.1կմ հեռավորությունների վրա:


Հայցվող տարածքը գտնվում է Արաքս գետից մոտ 450մ, Հրազդան գետի մոտ 1կմ հեռավորության վրա: Հայցվող տարածքի հարավային սահմանից մոտ 140մ հեռավորության վրա անցնում է Արաքս գետի վարարումներից պաշտպանող արգելաթումբ:

Նախագծվող ենթակառուցվածքները նպատակաուղղված են ձկնաբուծության կենսական ցիկլերի ամբողջական ապահովմանը՝ մայրական վտառի կազմավորում, շարունակական ապահովում, զարգացում, սելեկցիա, ինկուբացիա, թրթուրի և մանրածկան աճեցում, կենսունակ մանրածկան տեղափոխում լճակներ:

Նախատեսվում է աճեցնել ծիածանափայլ իշխանի (*Parasalmo mikissa*) և ստերյադ (*Acipenser ruthenus*) ձկնատեսակներ: Մանրածկից մինչև ապրանքային ձկան աճեցման ցիկլը տևում է մոտ 1 տարի: Իշխան ձկան հաշվարկով մեկ ձկան համար մինչև 1կգ աճեցնելու համար կպահանջվի 1.8 կգ կեր, իսկ ստերյադի հաշվարկով՝ 3.2 կգ: Անհրաժեշտ կերը կմատակարարվի Եղվարդի կերերի գործարանից և կպահեստավորվի ձկնաբուծարանի պահեստային տնտեսությունում, որտեղից չափաբաժիններով տրվելու է լճակներ:

Լճակների վրա տեղադրվելու են աեռատորներ՝ ջուրը անհրաժեշտ թթվածնով հագեցնելու համար:

Լճակների պատերի նկազագույն հաստությունը կազմելու է 50սմ: Նախատեսվում է իրականացնել պատերի և հաստակի ապահով ջրամեկուսացում, ինչի նպատակն է բացառել ջրի կորուստը: Ձկնատեսակներին բնական կենսամիջավայր ապահովելու համար ավազանները կկառուցվեն ավերից աստիճանաբար խորացումով, որտեղ առավելագույն խորությունը ավազանների միջնամասերում կկազմի մոտ 2.5մ ըստ ռելիեֆի:



Նկար 1.



Նկար 2.

Ավազանների միջնամասերում նման խորությունները հատուկ են ընտրված, որը հնարավորություն կտա այդ հատվածներում ջրաբուսականության չառաջացման և ավազանները ճահճացումից հնարավարինս զերծ պահելու համար:

Ավազանների նման տեսքը կիրթանի ափամերձ հատվածների բնական տրոֆիկ շղթայի ձևավորմանը, ինչը կհանդիսանա սնման աղբյուր և ձվադրավայր ձկների համար: Արդյունքում կստեղծվի ամբողջովին բնական կենսամիջավայր ձկների բնական վերարտադրության համար, որտեղ ձկների բնականոն աճը ապահովելու համար հավելյալ արհեստական կեր տալու անհրաժեշտություն չի առաջանա, ինչն էլ իր հերթին չի հանգեցնի ավազանների ճահճացման և կբացառի գարշահոտի տարածումը: Ավազանները կկառուցվեն փուլերով՝ 48 ամիսների ընթացքում, ինչը ժամանակ կտա ձկնատեսակների համար ավազաններում բնական կենսամիջավայրի ձևավորմանը:

Ավազանների մակերեսներն են. ավազան 1- 1.6հա, ավազան 2 – 1.6հա, ավազան 3 – 1.63հա, ավազան 4 – 1.98հա, ավազան 5 – 1.98հա, ավազան 6 – 1.93հա: Ընդհանուր ծավալը նախատեսվում է մոտ 322հա.մ³: Կիրառվելու է ջրի շրջանառու համակարգ: ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ընկերությունը դիմելու է պետական կառավարման լիազոր մարմնին՝ ջրօգտագործման թույլտվություն ստանալու համար: Ջրառի կետի ընտրությունը կդիտարկվի ջրօգտագործման

թույլտվության ստացման ժամանակ և համապատասխան ջրավազանները կառուցելուց հետո:

Նախատեսվում է աշխատանքների նյութատեխնիկական մատակարարման հետևյալ սխեման.

- առանձին ամրանային ձողերը և հիմնակմախքները, մետաղական կոնստրուկցիաները, մոնտաժային իրերն ավտոմոբիլային փոխադրամիջոցներով բերվում են անմիջականորեն նախատեսվող ձկնաբուծարանի տարածք, որտեղ կատարվում է դրանց պահեստավորում և տեղադրում,

- հարդարման նյութերը առաքվելու են անմիջապես տեղամասի տարածք՝ հետագա առաքման նպատակով:

Բնառեսուրսներից օգտագործվելու է միայն ջուր՝ աշխատանքային հարթակի ջրցանի, հանված գրունտի և ավազակոպճազլաքարային զանգվածի խոնավացման, ինչպես և անձնակազմի խմելու եւ կենցաղային նպատակների համար:

Աշխատանքների բնույթից ելնելով՝ բանվորական բրիգադները ձևավորվում են որպես բազմապրոֆիլ կամ մասնագիտացված: Բազմապրոֆիլ բրիգադները նպատակահարմար է կազմավորել խոշորացված (ընդհանրացված) տիպի ավարտուն արտադրանքի, աշխատանքների ընդհանրացված փուլի ստեղծման նպատակով: Բրիգադների քանակական և մասնագիտական - որակական կազմը սահմանվելու է աշխատանքների ծրագրված ծավալների, աշխատատարության և աշխատանքների կատարման ժամկետների հիման վրա:

Աշխատանքների պաշտպանության նպատակով նախատեսվում է.

Բանվորների աշխատանքի պաշտպանությունն ապահովվելու է անհատական պաշտպանության միջոցների կիրառմամբ (հատուկ արտահագուստ, կոշիկ), համալիր պաշտպանության միջոցառումների կատարումով (ցանկապատում, լուսավորում, օդափոխում, պաշտպանիչ և արգելակիչ սարքեր և հարմարանքներ և այլն), սանիտարակենցաղային շինություններով և սարքավորումներով՝ գործող նորմերին և կատարվող աշխատանքների բնույթին համապատասխան:

Աշխատանքի պաշտպանության՝ անվտանգության տեխնիկայի, արտադրական սանիտարահիգիենիկ միջոցառումների և հակահրդեհային անվտանգության վերաբերյալ անց է կացվելու հրահանգում: Աշխատանքների կատարման ընթացքում պահպանվելու են անվտանգության նորմերի և կանոնների պահանջները:

Բանվորների անվտանգության տեխնիկայի ուսուցման, հրահանգման ժամանակին և որակով անցկացման, անհատական պաշտպանական միջոցների վիճակի և կիրառման, արտադրական անվտանգության և արտադրական սանիտարահիգիենիկ անվտանգության հետ կապված բոլոր միջոցառումների կատարման հսկողությունը վերապահվում է աշխատանքներն իրականացնող կազմակերպությանը:

Աշխատողների ընդհանուր թիվը՝ 15 մարդ, որից

- ինժեներատեխնիկական անձնակազմ - 5 մարդ,

- արհեստագործներ և բանվորներ, վարորդներ - 10 մարդ:

Հիմնական տեխնիկայի պահանջարկը որոշվում է աշխատանքների ծավալների, մեխանիզմների և մեքենաների միջին արտադրողականության և աշխատանքների կատարման ընտրված եղանակների հիման վրա: Հիմնական մեքենաների և մեխանիզմների անվանացանկը բերված է ստորև. էքսկավատոր, ավտոինքնաթափեր, թրթուռավոր բուլդոզեր և անձնակազմն սպասարկող մարդատար մեքենա:

Արտադրական հրապարակը կազմակերպվում է ավագանների հյուսիսային հատվածում: Աշխատողների սանիտարակենցաղային պայմանները ապահովելու նպատակով արտադրական հրապարակում տեղադրվելու են. վագոն գրասենյակ, վագոն համգստի սենյակ-հանդերձարան, ջրի տարողություն, ցնցուղարան, զուգարան:

Կենցաղային կեղտաջրերի տեղադրման համար նախատեսվում է անջրաթափանց լցարան:

Աշխատանքների ընթացքում հնարավոր է նաև դիտարկել բիոզուգարանների տեղադրման հնարավորությունը: Կենցաղային կեղտաջրերը և կենսագործունեության արգասիքները համապատասխան կազմակերպությունների կողմից, պայմանագրային կարգով, պարբերաբար կհեռացվեն:

Աղբը հավաքելու համար տարողությունները (տեղական կառավարման մարմինների կողմից նախնական համաձայնությամբ) կտեղադրվեն նախապես տեղորոշված ու հաստատված վայրում՝ դեպի աղբավայր հետագա տեղափոխման նպատակով:

Հողային աշխատանքների ընթացքում առաջացած հողագրունտը կտեղադրվի հատուկ նախատեսված վայրում: Կոնստրուկտի նաև ավազակոպճային նյութի դասակարգիչ մեխանիզմի կիրառում, ինչի արդյունքում առկա թափոնների ծավալները էականորեն կկրճատվեն: Հանված հողագրունտը կօգտագործվի միջավազանային տարածությունների բարեկարգման, տեղաշարժման համար նախատեսված հարթակների համահարթեման նպատակով: Մեծաբեկորային զանգվածը կկիրառվի պարիսպի և ավտոկայանատեղիի շինարարության ընթացքում:

Հողաբուսական զանգվածի մի մասը (մոտ 1.5հազ.մ³), ջրավազանների ստեղծումից հետո, կօգտագործվի ձկնաբուծարանի տարածքի մոտ 0.5հա-ի կանաչապատման աշխատանքների համար, մնացածը (մոտ 7.0հազ.մ³) հողաթմբի տեսքով, կկուտակվի հատուկ նախատեսված վայրում, թմբի մակերեսին կկատարվի բազմամյա բույսերի ցանք :

Փոխադրամիջոցների և մեքենաների տեխնիկական սպասարկումը և լիցքավորումը իրականացվելու է տեղամասից դուրս մասնագիտացված կետերում:

Հայցվող տարածքում քսայուղեր և վառելանյութ չի պահեստավորվելու :

Անձնակազմի կենցաղային և տնտեսական ջրածախսը որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$W_{\text{խ.տ.}} = (n \times N + n_1 \times N_1) \times T, \text{ որտեղ}$$

n – ԻՏ աշխատողների, ծառայողների թվաքանակն է՝ 5 մարդ

N– ԻՏԱ ջրածախսի նորմատիվն է՝ 0.016 մ³օր/մարդ

n₁– սպասարկող աշխատողների թվաքանակն է՝ 10 մարդ

N₁ – սպասարկողների ջրածախսի նորմատիվն է՝ 0.025մ³օր/մարդ

T – աշխատանքային օրերի թիվն է՝ 180 օր

$$W_{\text{խ.տ.}} = (5 \times 0.016 + 10 \times 0.025) \times 180 = 18.9 \text{ խմ/ժամ.}:$$

Ջրցանի համար օգտագործվող ջրի ծախսը որոշվում է հետևյալ կերպ՝

$$U = S_1 \times K_1 \times T, \text{ որտեղ՝}$$

S₁ – ջրվող տարածքի մակերեսը, 2300քմ,

K₁ – 1 ք.մ. օրական ջրցանի նորմը, 0.0015մ³,

T – ջրցանի ժամանակահատվածը օրերով, 180

$$U = 2300 \times 0.0015 \times 180 = 621 \text{ խմ/ժամ.}:$$

Ընդամենը ջրօգտագործումը կկազմի մոտ 640խմ/ժամ:

Խմելու ջուրը մատակարարվում է պայմանագրային հիմունքներով, իսկ տնտեսակենցաղային ջրերը հավաքվում է սեպտիկ հորում և ըստ անհրաժեշտության տեղափոխվում կոյուղու դիտահոր: Աշխատանքների փուլում տեխնիկական ջուրը կբերվի պայմանագրային հիմունքներով ավտոցիստեռներով: Ընկերությունը կդիմի «Հայաստանի Էլեկտրական ցանցեր» բաժանորդ դառնալու նպատակով: Էլեկտրամատակարարումը կիրականացվի համաձայն տեխնիկական պայմանի, որի համար սահմանված կարգով կստացվի տեխնիկական պայման և լիցենզավորված կազմակերպության կողմից կիրականացվի նախագիծ:

Տարածքում գազաֆիկացում չի նախատեսվում, ջեռուցման համար կօգտագործվեն էլեկտրական սարքեր:

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի Հոդված 14-ի 6-րդ մասի 4-րդ կետի ա. ենթակետի, այն է՝ «ձկնաբուծական տնտեսություններն ենթակա են Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության միայն այն դեպքում, երբ ունեն տարեկան 100 տոննա և ավելի արտադրողականություն», ուստի նախատեսվող ձկնաբուծական տնտեսության գործունեությունն ենթակա չէ Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության: Սակայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի Հոդված 14-ի 6-րդ մասի 3-րդ կետի ա. ենթակետի համաձայն, այն է՝ «ջրամբարներ, արհեստական լճեր, ջրավազաններ՝ 100000 - 1մլն խմ», նախատեսվող ավազանների կառուցման աշխատանքներն ենթակա են Գ կատեգորիայով շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման և փորձաքննության:

Ձկնաբուծարանի ստեղծման համար նախատեսված ՀՀ Արարատի մարզի Նորամարգ բնակավայրի մոտ 20հա տարածքը հաշվառված է որպես քաղաքացու սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հող՝ խոտհարք և արոտավայր:

2. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ


- *Ռելիեֆ, երկրաձևաբանություն, արտածին գեոդինամիկ երևույթներ և սեյսմիկ պայմաններ*

Երկրաձևաբանական տեսակետից Նորամարզի ձկնաբուծարանի համար հայցվող տարածքը հարում է Արարատյան դաշտի մասը կազմող հարթավայրին, որի թեքության անկյունը չի գերազանցում 4°: Տեղամասի շրջանի բարձրությունը տատանվում է 820-825մ-ի սահմաններում: Արարատյան դաշտը Արարատյան գոգավորության հատակն է՝ լցված լճագետային, հեղեղաբերուկ նստվածքներով և լավաներով: Ձգվում է հյուսիս-արևմուտքից հարավ-արևելք՝ Ախուրյանի գետաբերանից մինչև Գայլի դրոնք, որով բաժանվում է Շարուրի դաշտից: Դաշտի երկարությունը կազմում է ավելի քան 100 կմ, իսկ լայնությունը մինչև 25 կմ: Հզոր լավահոսքերը Արարատի և Նախիջևանի գոգովարություններն իրարից անջատող հորստաբեկորային միջնորմի հատվածում արգելափակել են Արաքսի հին հունը, առաջացրել է լիճ, որի հետևանքով գոյացել են Արարատյան դաշտի նստվածները: Արարատյան դաշտի եզրագոտին ներկայացված է ժամանակակից գետերի արտաբերման և ջրաբերուկային հովհարաձև կոներով, որոնք վերածվել են սեղանաձև դարավանդների: Շրջանի լեռների երկրաձևաբանական և մակերևույթի թեքության անկյունների սխեմատիկ քարտեզները բերվում են ստորև նկար 4 և 5-ում:

Տեղամասի շրջանում արտածին երկրաբանական պրոցեսներ արտահայտված չեն, ինչը պայմանավորված է տարածքի երկրաձևաբանական առանձնահատկություններով: Մոտակա հայտնի սողանքային մարմինները քարտեզագրվել են տեղամասից ավելի քան 13կմ հեռավորության վրա՝ Այնթափ բնակավայրի տարածքում (Հայաստանում սողանքների տեխնիկական տեղեկագիր, Միջազգային համագործակցության Ճապոնական գործակալություն, ՀՀ քաղաքաշինության նախարարություն, 2005):

Ըստ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2020 թվականի դեկտեմբերի 28-ի «Երկրաշարժադիմացկուն շինարարություն. նախագծման նորմեր» N102-Ն հրամանի: Համաձայն դրա՝ տեղամասը գտնվում է 1-ին սեյսմիկ գոտում, որտեղ գրունտի սպասվելիք արագացման մեծությունը կազմում է 0.3g կամ 300սմ/վրկ² (նկար 5):

ՇՐՋԱՆԻ ԵԿՐԱԶԵՎԱԲԱՆԱԿԱՆ ՍԽԵՄԱՏԻԿ ՔԱՐՏԵԶ




ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ

1 - Ցածր /700-1100մ/ ենթահորիզոնական մասամբ դարավանդավորված ներլեռնային հարթավայրեր

Նկար 3.

ՇՐՋԱՆԻ ԼԱՆՁԵՐԻ ԹԵՔՈՒԹՅԱՆ ՍԽԵՄԱՏԻԿ ՔԱՐՏԵԶ



ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ

1 - Հարթավայրեր՝ 0-4 աստիճան թեքությամբ

Նկար 4.




Նկար 5.

• **Շրջանի կլիման**

Ձկնաբուծարանի համար հայցվող տարածքը ներառված է չոր ցամաքային կլիմայական գոտում (նկար 6), ցուրտ ձմեռով և շոգ ամառով (ամռանը մինչև +40°C, իսկ ձմռանը՝ -10°C):

Շրջանի տարեկան միջին ջերմաստիճանը տատանվում է +6°C-ից +12°C: Մթնոլորտային տեղումների տարեկան միջին քանակը չի գերազանցում 300մմ: Տեղումների առավելագույն քանակը 37մմ է (հունիս ամսին): Տասնօրյա առավելագույն ձյան ծածկույթը կազմում է 35մմ: Անսառնամանիք օրերի թիվը՝ 150-200օր: Կայուն ձյան ծածկույթը գոյանում է դեկտեմբերի 15-ից և պահպանվում է մինչև մարտի 15-ը: Քամիների հիմնական ուղղություններն են հյուսիս, հարավ-արևելք և հյուսիս-արևմուտք: Անհողմությունները կազմում են 29%:

ՇՐՋԱՆԻ ԿԼԻՄԱՅԱԿԱՆ ՏԻՊԵՐԻ ՍԽԵՄԱՏԻԿ ՔԱՐՏԵԶ



ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ

1 - Չոր ցամաքային կլիմայական գոտի

Նկար 6.

Ստորև 1-7 աղյուսակներում ամփոփված է տեղեկատվություն օդի ջերմաստիճանը, քամիների, տեղումների վերաբերյալ (ըստ մոտակա Արտաշատ և Երևան «Էրեբունի» օդերևութաբանական կայանների տվյալների):

Աղյուսակ 1.

Օդի ամսեկան և տարեկան ջերմաստիճանները

| Ըստ ամիսների | | | | | | | | | | | | Միջին տարեկան, °C | Բացարձակ նվազագույն, °C | Բացարձակ առավելագույն, °C |
|------------------------|------|-----|------|------|------|------|------|-------|------|-----|------|----------------------|-------------------------|---------------------------|
| I | II | III | IV | V | VI | VII | VIII | IX | X | XI | XII | | | |
| Արտաշատ կայան | | | | | | | | | | | | | | |
| -3.6 | -0.9 | 5.6 | 12.7 | 17.5 | 21.5 | 25.3 | 24.8 | 19.8 | 13.0 | 6.0 | -0.6 | 11.8 | -29 | 43 |
| Երևան «Էրեբունի» կայան | | | | | | | | | | | | | | |
| -3.6 | -1.0 | 5.3 | 12.5 | 17.4 | 21.8 | 25.8 | 52.2 | 20.50 | 13.3 | 6.3 | -0.2 | 11.9 | -28 | 42 |

Աղյուսակ 2.

Օդի հարաբերական խոնավությունը ըստ ամիսների, %

| I | II | III | IV | V | VI | VII | VIII | IX | X | XI | XII |
|------------------------|----|-----|----|----|----|-----|------|----|----|----|-----|
| Արտաշատ կայան | | | | | | | | | | | |
| 78 | 73 | 63 | 58 | 59 | 54 | 51 | 52 | 57 | 68 | 73 | 79 |
| Երևան «Էրեբունի» կայան | | | | | | | | | | | |
| 79 | 75 | 62 | 56 | 57 | 49 | 45 | 46 | 49 | 62 | 73 | 79 |

Աղյուսակ 3.

Տեղումների քանակը ըստ ամիսների, մմ

| Տեղամների քանակը միջին ամսական/օրական առավելագույն, մմ | | | | | | | | | | | | |
|---|----|-----|----|----|----|-----|------|----|----|----|-----|-------|
| I | II | III | IV | V | VI | VII | VIII | IX | X | XI | XII | միջին |
| Արտաշատ կայան | | | | | | | | | | | | |
| 18 | 18 | 27 | 36 | 40 | 25 | 11 | 6 | 10 | 22 | 24 | 17 | 254 |
| 18 | 20 | 32 | 36 | 46 | 34 | 27 | 22 | 28 | 36 | 31 | 25 | 43 |
| Երևան «Էրեբունի» կայան | | | | | | | | | | | | |
| 24 | 23 | 32 | 35 | 45 | 23 | 11 | 8 | 12 | 29 | 28 | 21 | 291 |
| 24 | 23 | 34 | 29 | 42 | 34 | 29 | 37 | 51 | 35 | 36 | 28 | 51 |

Աղյուսակ 4.

Քամիներ

| Միջին տարեկան մթնոլորտային ճնշում, հՊա | Ամիսներ | Կրկնելիությունը, % Միջին արագությունը, մ/վ | | | | | | | | Միջին ամսական արագությունը, մ/վ | Միջին տարեկան արագությունը, մ/վ | Ուժեղ քամիներով օրերի քանակը, օր |
|--|-----------|---|--------|-----|--------|-----|--------|-----|--------|---------------------------------|---------------------------------|----------------------------------|
| | | Ուղղությունները | | | | | | | | | | |
| | | Հս | Հս-Արլ | Արլ | Հվ-Արլ | Հվ | Հվ-Արմ | Արմ | Հս-Արմ | | | |
| Արտաշատ կայան | | | | | | | | | | | | |
| 920.2 | հունվար | 7 | 8 | 10 | 20 | 12 | 10 | 15 | 18 | 88 | 0.4 | 7 |
| | | 1.7 | 1.7 | 2.7 | 3.1 | 2.4 | 2.0 | 2.2 | 1.74 | | | |
| | ապրիլ | 4 | 9 | 12 | 27 | 13 | 8 | 13 | 15 | 74 | | |
| | | 1.7 | 1.8 | 2.1 | 2.8 | 2.5 | 2.8 | 2.8 | 2.6 | | | |
| | հուլիս | 8 | 7 | 9 | 16 | 9 | 9 | 18 | 24 | 80 | | |
| | | 1.7 | 1.9 | 1.7 | 2.0 | 2.0 | 2.0 | 2.7 | 2.3 | | | |
| | հոկտեմբեր | 7 | 12 | 12 | 19 | 8 | 10 | 16 | 16 | 85 | | |
| | | 1.6 | 1.5 | 2.1 | 2.0 | 1.5 | 2.1 | 2.4 | 2.0 | | | |
| Երևան «Էրեբունի» կայան | | | | | | | | | | | | |
| 912.1 | հունվար | 4 | 9 | 11 | 14 | 21 | 25 | 12 | 4 | 76 | 0.7 | 1.5 |
| | | 2.2 | 2.2 | 2.2 | 2.9 | 2.7 | 2.3 | 2.6 | 2.7 | | | |
| | ապրիլ | 7 | 14 | 8 | 16 | 20 | 16 | 13 | 6 | 45 | | |
| | | 3.1 | 3.2 | 2.8 | 4.0 | 3.1 | 3.0 | 3.8 | 3.6 | | | |
| | հուլիս | 17 | 28 | 4 | 9 | 17 | 13 | 8 | 4 | 36 | | |
| | | 5.2 | 5.7 | 2.8 | 2.7 | 2.4 | 2.7 | 2.9 | 4.3 | | | |
| | հոկտեմբեր | 6 | 18 | 10 | 10 | 21 | 20 | 10 | 5 | 63 | | |
| | | 2.9 | 2.5 | 2.1 | 2.5 | 2.3 | 2.4 | 2.9 | 3.5 | | | |

Աղյուսակ 5.

| Չնաձագակույթը | | |
|--|---------------------------------------|--------------------------------------|
| Չնաձագակույթ | | |
| Առավելագույն տասնորյակային բարձրությունը, սմ | Տարվա մեջ ձնաձագակույթով օրերի քանակը | Չյան մեջ ջրի առավելագույն քանակը, մմ |
| Արտաշատ կայան | | |
| 40 | 35 | 46 |
| Երևան «Էրեբունի» կայան | | |
| 58 | 47 | - |

Աղյուսակ 6.

| Արևափայլի տևողությունը, ժամ | | | | | | | | | | | |
|-----------------------------|-----|-----|-----|-----|-----|-----|------|-----|-----|-----|-----|
| I | II | III | IV | V | VI | VII | VIII | IX | X | XI | XII |
| Արտաշատ կայան | | | | | | | | | | | |
| 87 | 108 | 167 | 186 | 251 | 305 | 341 | 319 | 276 | 204 | 138 | 89 |

Աղյուսակ 7.

| Անարև օրերի քանակը, օր | | | | | | | | | | | |
|------------------------|----|-----|----|-----|-----|-----|------|-----|---|----|-----|
| I | II | III | IV | V | VI | VII | VIII | IX | X | XI | XII |
| Արտաշատ կայան | | | | | | | | | | | |
| 11 | 7 | 5 | 3 | 0.9 | 0.2 | - | 0.1 | 0.2 | 1 | 5 | 10 |

• **Մթնոլորտային օդ**

Ձկնաբուձարանի համար հայցվող տարաձքում շրջակա միջավայրի պետական մոնիթորինգի համակարգում ներառված մթնոլորտային օդի մոնիտորինգի դիտակայան չկա:

Որոշակի պատկերացում տարաձքի օդային ավազանների աղտոտվածության մասին կարելի է ստանալ նաև հաշվարկային եղանակով: Դրա համար ՀՀ բնապահպանության նախարարության «Շրջակա միջավայրի վրա ներգործության մոնիտորինգի կենտրոն» ՊՈԱԿ կողմից մշակվել է ուղեցույց ձեռնարկ, ուր ներկայացված են մթնոլորտային օդի ֆոնային աղտոտվածության ցուցանիշների կախվածությունը տվյալ բնակավայրի ազգաբնակչության քանակից:

| Բնակչության քանակը (հազ.) | Որոշված նյութերի ֆոնային կոնցենտրացիաները (մգ/մ ³) | | | |
|---------------------------|--|----------------|----------------|---------------|
| | Փոշի | Ծծմբի երկօքսիդ | Ազոտի երկօքսիդ | Ածխածնի օքսիդ |
| 50 -125 | 0,4 | 0,05 | 0,03 | 1,5 |
| 10 - 50 | 0,3 | 0,05 | 0,015 | 0,8 |
| < 10 | 0,2 | 0,02 | 0,008 | 0,4 |

Տեղամասի տարածքին մոտ գտնվող բնակավայրերում մշտական բնակչությունը ըստ պաշտոնական տվյալների չի գերազանցում 10000 մարդ: Հետևաբար, տեղամասի տարածքի համար որպես մթնոլորտային օդի ֆոնային աղտոտվածության ցուցամիջ պետք է ընդունել. փոշի 0.2մգ/մ³, ծծմբի երկօքսիդ 0.02 մգ/մ³, ազոտի երկօքսիդ 0.008մգ/մ³ և ածխածնի օքսիդ 0.4մգ/մ³:

2022 թվականի փետրվարին կատարվել է տեղամասի տարածքի մթնոլորտային օդի դիտարկում, որի արդյունքում արձանագրվել են հետևյալ ցուցանիշները. փոշի 0.22մգ/մ³, ծծմբի երկօքսիդ 0.021մգ/մ³, ազոտի երկօքսիդ 0.0085մգ/մ³ և ածխածնի օքսիդ 0.41մգ/մ³ (ըստ «Ար Ֆիշ» ընկերության կողմից պատվիրված ուսումնասիրության արդյունքների):

▪ **Ջրային ռեսուրսներ**

Ձկնաբուծարանի համար հայցվող տարածքում ջրագրական ցանցը ներկայացված է Արաքս և Հրազդան գետերով:

Արաքս գետը դիտարկվող շրջանում բնութագրվում է տարվա մեջ մեկ՝ զարնանային վարարումով, որն սկսվում է մարտի 15-20-ից և ավարտվում է հունիսի 15-30-ին՝ տևելով շուրջ 90-103 օր: Այս շրջանում ջրի ծախսը կազմում է միջինը 1690մ³/վրկ: Ջրի առավելագույն նվազումը տեղի է ունենում օգոստոս-սեպտեմբեր ամիսներին, երբ ջրի ծախսը նվազում է մինչև 16.6 մ³/վրկ: Տարեկան ջրի միջին ծախսը կազմում է 167 մ³/վրկ: Ջրի միջին տարեկան ծախսը կազմում է 86.2մ³/վրկ:

Արաքսի ջրերը հայտնի են պղտորության բարձր մակարդակով: Ջրի տարեկան պղտորությունը կազմում է միջինը 1200գր/մ³, բերվածքների միջին ծախսը 200կգ/վրկ: Գարնանային վարարման ժամանակ առավելագույն պղտորությունը կազմում է 26000 գր/մ³ և տևում է մեկ շաբաթ, բերվածքների ծախսը կազմում է 3100 կգ/վրկ:

Գետը սկիզբ է առնում Բյուրակն հրաբխային բարձրավանդակից (մոտ 3000մ բարձրությունից), մինչև Արարատյան դաշտ մտնելը հոսում է նեղ կիճերով, տեղ-տեղ՝ լայնացված հովտով, ունի մեծ անկում: Գետի երկարությունը 1720կմ է, ավազանը՝ 102 հազ.կմ²:

Մինչև Սևանա լճի մակարդակի արհեստական իջեցումը Հրազդանը սկիզբ է առել լճից Սևան քաղաքի մոտակայքում: Գետի ավազանը նրա վերին հոսանքներում սահմանափակված է հյուսիսում Փամբակի, արևմուտքում՝ Ծաղկունյաց և արևելքում՝ Գեղամա լեռնաշղթաներով: Գետը հիմնականում հոսում է նեղ կիրճով: Երևանից ներքև նա դուրս է գալիս Արարատյան դաշտ և թափվում է Արաքս գետը Մեծամորի գետաբերանից 5 կմ ներքև: Գետի երկարությունը 141 կմ է, անկումը մոտ 1000 մ, ջրհավաք ավազանի մակերեսը առանց Սևանա լճի 2560 կմ²: Լեռնագրական, ջրաերկրաբանական և երկրաբանական պայմաններով գետի ջրհավաք ավազանը բաժանվում է միմյանցից խիստ տարբերվող երկու մասի: Աջ ափում գերակշռում են ջրակայուն շերտերը, ձախ կողմից, ընդհակառակը, ջրահավաք ավազանը կազմված է խիստ ձեղքավորված ջրաթափանց ապարներից: Այս է պատճառը, որ գետը նշանակալի վտակներ ունի միայն աջ ափից (Մարմարիկ, Դալար, Արայիգետ):

Շնորհիվ այն բանի, որ Հրազդան գետը սկիզբ է առնում Սևանա լճից, ունի մեծ անկում, հոսում է Արարատյան գոգահովտով, հանրապետության կենտրոնական շրջաններով և մայրաքաղաքի միջով, այն իրավամբ համարվում է Հայաստանի հիմնական ջրային երակը: Գետը լիարժեք կերպով օգտագործվում է Սևան-Հրազդան ջրատնտեսական համալիրում ոռոգման և էներգետիկ նպատակներով:


Մասիս դիտակետում Հրազդան գետի հիդրոլոգիական բնութագրիչներն են.

Աղյուսակ 9.


| Գետ-դիտակետ | Ջրհավաք ավազանի մակերեսը, կմ ² | Բազմամյա միջին տարեկան ելքը, մ ³ /վ | Հոսքի մոդուլը, լ/վ*կմ ² | Հոսքի շերտը, մմ | Հոսքի ծավալը, մլն.մ ³ /տ | Առավելագույն ելքը, մ ³ /վ | Նվազագույն ելքը, մ ³ /վ |
|---------------|---|--|------------------------------------|-----------------|-------------------------------------|--------------------------------------|------------------------------------|
| Հրազդան-Մասիս | 2500 | 25.8 | 11.1 | 350 | 814 | 174 | 2.31 |

Ստորև ներկայացվում են ՀՀ շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից 2022 թվականի Հրազդան գետի ջրի որակի մայիսին կատարված դիտարկումների արդյունքները՝ Երևանից ներքև՝ Դարբնիկ գյուղի մոտ, գետաբերանի և Գեղանիստ գյուղի մոտ հատվածներում (նկար 7-8):

ՀՀ Հրազդանի ջրավազանային կառավարման տարածքի
մակերևութային ջրերի որակը (դեկտեմբեր / 2021 թվական)



Նկար 7.




Նկար 8.

Արաքս գետի հունը գտնվում է հայցվող տարածքից 450մ հեռավորության վրա, հունից տարածքը բաժանված է պաշտպանիչ հողաթմբով, իսկ Հրազդան գետը՝ 1.0-1.07կմ հեռավորության վրա:

Արարատյան դաշտի սահմաններում է գտնվում ստորերկրյա քաղցրահամ խմելու ջրերի արտեզյան ավազանը, որը տարածքի էկոլոգիական համակարգի որոշիչ բաղադրիչն է: Ավազանը կազմված է ստորերկրյա ջրերի հինգ ավազաններից

(նկար 9), որոնց ջրային ռեսուրսները հաշվարկվել են 1984 թվականին և ներկայցված են աղյուսակ 10-ում:



Նկար 9.

Աղյուսակ 10.


Արարատյան արտեզիան ավազանի ջրային ռեսուրսները

| Ստորերկրյա ջրերի ավազանը | Աղբյուրների հաստատված պաշարները, A+B կարգի, լ/վրկ | Հիմնական հորատանցքերի հաստատված պաշարները, A+B կարգի, լ/վրկ |
|--------------------------|---|---|
| Արագրայանի իջվածք | | 2138.9 |
| Արտաշատի իջվածք | 224.5 | 3056.7 |
| Գայ-Հայկաշենի հանքավայր | | 5063.6 |
| Հոկտեմբերյանի իջվածք | 18436.6 | 31880.8 |
| Սովետաշենի բարձրացում | 3260.4 | 9601.8 |
| Ընդամենը | 21921.2 | 51741.8 |

▪ **Հողեր**

Ձկնաբուծարանի համար ընտրված տարածքի բնակլիմայական պայմանները և ռելիեֆը կանխորոշել են մարգագետնաճահճային աղուտ-ալկալի և ոռոգելի մնացորդային մարգագետնային-գորշ աղուտ-ալկալի կավային հողերի զարգացումը (նկար 10) :

ՇՐՋԱՆԻ ՀՈՂԵՐԻ ԲՆԱԿԱՆ ՏԻՊԵՐԻ ՍԽԵՄԱՏԻԿ ՔԱՐՏԵԶ



ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ

- 1 - Մարգագետնաճահճային աղուտ-ալկալի կավավազային հողեր
- 2 - Ոռոգելի խոնավ-մարգագետնային-գորշ աղուտ-ալկալի կավային հողեր
- 3 - Ոռոգելի մնացորդային մարգագետնային-գորշ խորքային-ձուլված հողեր

Նկար 10.

Մարգագետնային գորշ ոռոգելի հողերը ձևավորվել են Արարատյան հարթավայրի բնահողային շրջանում՝ Արաքս գետի և նրա ձախակողմյան վտակների բերվածքների վրա, մարդու ներգործության պայմաններում: Այն հատվածներում, որտեղ հանքայնացված խորքային ջրերը մոտ են մակերեսին, առաջացել են նաև հիդրոմորֆ աղուտ-ալկալի հողեր: Այս հողերը տարածված են Արարատյան հարթավայրի համեմատաբար ցածրադիր թույլ թեք հարթություններում:

Այս տիպի հողերում հողագոյացնող պրոցեսներն ընթացել են հիդրոմորֆ ռեժիմի պայմաններում: Մարգագետնային գորշ հողերում հումուսի քանակը կազմում է 3-3.5% :

Ոռոգելի խոնավ-մարգագետնային գորշ աղուտ-ալկալի հողերը աչքի են ընկնում խիստ թույլ հումուսացվածությամբ (մինչև 1%), բարձր հիմնայնությամբ, կարբոնատների զգալի պարունակությամբ (15-18%), շերտավորված մեխանիկական կազմով: Պրոֆիլում պարզորոշ առանձնացվում է մակերեսային աղային հորիզոնը,

որտեղ հեշտ լուծվող աղերի քանակը 2% և ավելի է, սակայն դեպի ստորին շերտերը նրա պարունակությունը նվազում է: Հողերի գերակշռող մասին հատկանշական է փոխանակային նատրիումի բարձր պարունակությունը (առանձին շերտերում 21-23 մգ/էկվ):

Հայցվող տարածքում հողային շերտի հզորությունը կազմում է 5-10սմ: Ձկնաբուծարանի համար նախատեսված տարածքը հաշվառված է որպես արոտավայր և խոտհարք, սակայն հումիսի նվազագույն պարունակությունների և ցածր արգասաբերության պատճառով գրեթե պիտանի չեն գյուղատնտեսական աշխատանքների համար :

Նմուշարկման արդյունքում տեղամասի հողային շերտում արձանագրվել է 112453մգ/կգ սիլիցիում, 964մգ/կգ մանգան, 890մգ/կգ ֆոսֆոր, 1.05մգ/կգ պղինձ, 0.094մգ/կգ նիկել և 10.5մգ/կգ ցինկ (ըստ «Ար Ֆիշ» ընկերության կողմից պատվիրված ուսումնասիրության արդյունքների):


▪ ***Բուսական և կենդանական աշխարհ***

Ձկնաբուծանանի շրջանի բուսականությունը ներկայացված է համեմատաբար երիտասարդ, ստորին չորրորդական դարաշրջանից ՀՀ տարածքում իհայտ եկած աղասեր անապատային բուսատեսակներով (նկար 11):

Տեղամասում նշվել են օշան հավամրգանման (*Salsola ericoides* Bieb.), սարսազան կոնաձև (*Halocnemum strobilaceum* Pall. Bieb), անցողունիկ հեռացած (*Puccinellia distans*), սեզ սողացողը (*Elytrigia repens*), հազարատերևուկ նեղատերև (*Achillea tenuifolia*), դաշտավլուկ սոխուկային (*Poa bulbosa*), օշինդր բուրավետը (*Artemisia fragrans* Willd.), լվածադիկ արծաթատերևը (*Tanacetum argyrophyllum* C. Koch. Tzvel.), փշոտ կապարը (*Capparis spinosa*) և սովորական եղեգը (*Phragmites communis*):

Ձկնաբուծարանի կառուցման համար ընտրված տարածքի շրջանում ՀՀ բույսերի Կարմիր գրքում գրանցված տեսակների վերաբերյալ տեղեկատվություն ստանալու նպատակով կատարվել է ՀՀ կառավարության 29.01.2010թ.-ի N72-Ն որոշման նյութերի վերլուծություն: Ըստ նշված որոշման, շրջանում հայտնի ՀՀ

բույսերի կարմիր գրքում գրանցված բուսատեսակների վերաբերյալ տվյալները ներկայացված են ստորև:



Նկար 11.

- միկրոկենտրոն մարջանանման – վտանգված տեսակ է, հայտնի է Մասիս քաղաքի շրջակայքում՝ աղակալած ճահիճներում և աղուտներում, տեղամասից մոտ 6կմ հեռավորության վրա,
- հիրիկ մուսուլմանական – վտանգված տեսակ, աճում է Միսյան և Մասիս բնակավայրերի շրջակայքում՝ տեղամասից 4-6կմ հեռավորության վրա,
- ջրահարս փոքր – խոցելի տեսակ, հայտնի է Մասիս քաղաքի շրջակայքից, տեղամասից մոտ 6կմ հեռավորության վրա,
- կղմուխ Օշեի – վտանգված տեսակ, հայտնի է Մասիս քաղաքի շրջակայքից, տեղամասից մոտ 6կմ հեռավորության վրա,
- բիեներցիա շուրջաթև - կրիտիկական վիճակում գտնվող տեսակ, հայտնի է Մասիս գյուղի շրջակայքում, տեղամասից մոտ 6կմ հեռավորության վրա:

Հայցվող տարածքը ուսումնասիրվել է երթուղիներով, ՀՀ բույսերի կարմիր գրքում գրանցված, վերը թվարկված տեսակները տեղամասի տարածքում չեն դիտարկվել:

Խոշոր կաթնասուններ հայցվող 20հա տարածքում չեն արձանագրվել: Տարածքում հայտնաբերվել են կրծողների բազմաթիվ բներ: Թռչուններից դիտարկվել է սովորական կաչաղակ և տնային ճնճղուկ:

Բազմազան է անողնաշարավորների ֆաունան: Նշվել է *Cerocoma kinzei* E. Frivaldsky, *Calydus pulcher* Reitt., *Mylabris variabilis* (Pallas), *Mylabris quadripunctata* (Linne), *Stenodera caucasica* (Pallas), *Mycetocharina orientalis* (Faust), *Podonta elongate* (Menetries). *Turanella latevittis*, *Aphodius fumigatulus* Reitter, *Sympycna annulata braueri* Jac. & Bianchi, *Agrion splendens*: Սողուններից դիտարկվել է *Ophisaurus apodus* (Pallas) և *Eremias strauchi* Kessler:

Տարածքը ուսումնասիրվել է երթուղիներով՝ ՀՀ կենդանիների կարմիր գրքում գրանցված տեսակներ հայտնաբերելու նպատակով: Ըստ ՀՀ կառավարության 29.01.2010թ.-ի N71-Ն որոշման, Կենդանիների կարմիր գրքում գրանցված տեսակներից 1-ին տեղամասի շրջանում հայտնի են.

- Ուբադչի ճպուռ – սահմանափակ արեալով հազվագյուտ տեսակ, հայտնի է Բուրաստան գյուղի շրջակայքից, հայցվող տեղամասից մոտ 5.5կմ հեռավորության վրա,
- Միմպեկտա ճպուռ – հազվագյուտ տեսակ է, հայտնի է Արտաշատ քաղաքի շրջակայքում, հայցվող տեղամասից շուրջ 10կմ հեռավորության վրա,
- Վան Բրինկի նետիկ – հազվագյուտ տեսակ է, հայտնի է Մասիս քաղաքի շրջակայքից, հայցվող տեղամասից մոտ 6կմ հեռավորության վրա,
- Սնծովյան ճպուռ – ծայրահեղ սահմանափակ արեալով հազվագյուտ տեսակ, հայտնի է Մասիս քաղաքի շրջակայքից, տեղամասից մոտ 6կմ հեռավորության վրա,
- Անդրկովկասյան տակիրյան կլորագլուխ – խիստ սակավաթիվ, անհետացող տեսակ, հատնի է Արտաշատի տարածաշրջանի նոսր քսերոֆիտ (չորասեր) բուսածածկով ավազուտային և աղուտային կիսաանապատներում (շուրջ 10կմ հեռավորության վրա),

- Փոքր ճագարամուկ - Արարատյան հարթավայրի նեղ արեալային էնդեմիկ տեսակ է, խիստ մասնատված արեալով, հայտնի է Արարատի մարզի կավային և խճաքարային կիսաանապատներում, աղուտներում և փոքր ավազուտներում (տակիրներ), չոր լեռնատափաստանի աղուտային և անապատացած բիոտոպերում, հաճախ աղուտային, ավելի հազվադեպ՝ օշինդրային բուսական խմբավորումներով:

Նորամարզի ձկնաբուծարանի համար հայցվող տարածքում ՀՀ կենդանիների կարմիր գրքերում գրանցված՝ վերը նշված տեսակները չեն դիտարկվել:

▪ ***Վտանգված էկոհամակարգեր, բնության հատուկ պահպանվող տարածքներ***

Նորամարզի ձկնաբուծարանի համար հայցվող տեղամասում բնության հատուկ պահպանվող տարածքներ, որտեղ իրականացվում է վտանգված էկոհամակարգերի պահպանություն, չկան:

Արարատի մարզում, հայցվող տեղամասից մոտ 18.5կմ հեռավորության վրա, գտնվում է «Խոսրովի անտառ» պետական արգելոցը, որը հիմնադրվել է 1958 թվականին: Արգելոցը գտնվում է Արարատի մարզում Արարատյան դաշտի հարևանությամբ՝ Գեղամա լեռնաշղթայի լեռնաբազուկների, Երանոսի և Երախի լեռների վրա: Այն զբաղեցնում է 23213.5հա տարածք, տեղակայված է ծովի մակարդակից 700-ից մինչև 2800 մ բարձրության վրա: Արգելոցի բուսական աշխարհը ներառում է անոթավոր բույսերի 1849 տեսակ: Ավելի քան 80 տեսակ ընդգրկված են Հայաստանի Կարմիր գրքում, իսկ 24 տեսակը էնդեմիկ են: Արգելոցի տարածքի 16%-ը անտառածածկ է: Բացատները, թփուտները և մացառուտները զբաղեցնում են տարածքի մեծ 20%-ը: Տարածքի մնացած 64%-ը զբաղեցնում են լեռնային քսերոֆիտների տարբեր տիպի համակեցություններ:

Կենդանական աշխարհը ներառում է կաթնասունների՝ 44, թռչունների՝ 192, սողունների՝ 33, երկկենցաղների՝ 5 և ձկների՝ 9 տեսակներ: Արգելոցի ժայռային, քարքարոտ, խիստ թեքություն ունեցող սարալանջերը ապրելավայր են հանդիսանում գորշ արջի (*Ursus arctos syriacus*), բեզոարյան այծի (*Capra aegagrus*), կովկասյան ընձառյուծի (*Panthera pardus ciscaucasica*) համար, որոնք գրանցված են Հայաստանի Կարմիր գրքում:

Արգելոցի առանձնահատկություններից է նաև պատմական և մշակութային հարուստ ժառանգությունը՝ սկսած վաղնջական ժամանակներից: Տարածքը սերտորեն կապված է հայ ժողովրդի պատմության և պատմական անցյալի փառահեղ դրվագների հետ՝ սկսած բազմաստված հեթանոսական և հելլենիստական մշակույթի շրջաններից: Արգելոցում մինչ օրս պահպանվում են բազմադարյան պատմություն ունեցող մշակութային կոթողներ, պատմաճարտարապետական հուշարձաններ, բույսերի և կենդանիների եզակի տեսականեր, լանդշաֆտների հիասքանչ բազմազանություն:

Տեղամասից շուրջ 17կմ հեռավարության վրա է գտնվում մեկ այլ բնության հատուկ պահպանվող տարածք՝ «Գոռավանի ավազուտներ» պետական արգելավայրը, որտեղ բուսականության հիմնական տիպը ավազային ջուզգունային անապատն է: Սա միակ տեղամասն է Փոքր Կովկասում որտեղ ներկայացված են ջուզգունի համակեցությունները, և խիստ հազվագյուտ է ողջ Կովկասի համար: Արգելավայրը անոթավոր բույսերի հազվագյուտ և անհետացող տեսակների բացարձակ թվաքանակով Հայաստանում գտնվում է առաջին տեղում /10 տեսակներ գրանցված են Հայաստանի Կարմիր գրքում/: Ընդհանուր առմամբ արգելավայրի տարածքում աճում են 160 տեսակի անոթավոր բույսեր: Էնդեմիկ ներկայացուցիչներից են *Salsola tamamschjanae*, *Acantholimon araxanum*: Այստեղ աճում են նաև ՀՀ Կարմիր գրքում գրանցված հազվագյուտ և արժեքավոր մի շարք այլ տեսակներ: Ողնաշարավորների ֆաունան հաշվվում է մոտ 20 տեսակ: Տարածքից հայտնի են Հայաստանի համար էնդեմիկ հանդիսացող 12 տեսակ բզեզներ:

Հայցվող տարածքից մոտ 17կմ հեռավորության վրա գտնվում է «Խոր վիրապ» պետական արգելավայրը, որը հիմնվել է 2007 թվականի հունվարի 25-ի N975-Ն որոշմամբ Փոքր Վեդու գյուղական համայնքի վարչական սահմաններում, Արաքս գետի ձախակողմյան մասի Խոր Վիրապ եկեղեցական համալիրի և Հայաստանի հնագույն մայրաքաղաք Արտաշատի աջակողմյան հատվածում գտնվող՝ 50,28 հեկտար տարածքում խոնավ տարածքի էկոհամակարգի, դրա բաղադրիչների, բուսական ու կենդանական տեսակների պահպանությունը, բնականոն զարգացումը, վերարտադրությունն ու կայուն օգտագործումն ապահովելու նպատակով: Արգելավայրի հատուկ պահպանության օբյեկտները մերձարաքսյան խոնավ

տարածքի էկոհամակարգի յուրահատուկ կենդանական աշխարհն ու ջրաճահճային բուսականությունն են :

Արգելավայրի հիմնական խնդիրներն են՝

1) «Խոր Վիրապ» արգելավայրի լանդշաֆտային և կենսաբանական բազմազանության բնականոն զարգացման ապահովումն ու պահպանությունը.

2) խոնավ տարածքի էկոհամակարգի էկոլոգիական հավասարակշռության, այդ թվում՝ ջրային ռեժիմի պահպանությունը.

3) վայրի բուսատեսակների և կենդանիների բնական միջավայրի պահպանությունը.

4) վտանգված, կրիտիկական վիճակում գտնվող, խոցելի, անհետացման եզրին գտնվող, ինչպես նաև Հայաստանի Կարմիր գրքում ընդգրկված բույսերի և կենդանիների տեսակների պահպանությունն ու վերարտադրությունը.

5) գիտաճանաչողական և էկոլոգիական զբոսաշրջության իրականացման նախադրյալների ստեղծումը :

Բնության հատուկ պահպանվող տարածք է համարվում նաև բնության հուշարձանը : ՀՀ կառավարության 14.08.2008թ.-ի N967-Ն որոշմամբ հաստատվել է ՀՀ տարածքի բնության հուշարձանների ցանկը, որոնք նույնպես հանդիսանում են բնության հատուկ պահպանվող տարածքներ :

ՀՀ Արարատի մարզում հաշվառված են բնության հուշարձանների ցանկը, ինչպես նաև դրանց գտնվելու վայրը ներկայացված է աղյուսակ 11-ում :

Աղյուսակ 11.

| Հ/Հ | Անվանումը | Տեղադիրքը |
|-----|--|---|
| 1 | 2 | 3 |
| 1. | «Անձավիկ» քարանձավ | Վեդի քաղաքից մոտ 20 կմ հս-արլ, Ուխտու-ակունք գետի աջ ափին, Դարբանդ գետի հետ միախառնման տեղից 8 կմ հոսանքով վեր, 40 մ գետի հունից բարձր, ծ.մ-ից 2100 մ բարձրության վրա |
| 2. | «Դաշտաքար» քարանձավ | Դաշտաքար գյուղից 0,2 կմ հվ, Անահավատքար լեռան հս լանջին, հիմքից 400մ բարձրության վրա |
| 3. | «Մեծ հոր» համակարգ անձավային համակարգ» | Շաղափ գյուղից 3 կմ հս-արլ, ծ.մ-ից 2200 մ բարձրության վրա |
| 4. | «Անանուն» շերտավոր նստվածքներ | Տիգրանաշեն-Պարույր Սևակ գյուղերի ճանապարհի 17-րդ կմ-ի վրա |

| 1 | 2 | 3 |
|-----|-----------------------------------|---|
| 5. | «Անանուն» անտիկլինալ ծայք | Երևան-Մեղրի խճուղու 81-րդ կմ (Տիգրանաշեն-Պարույր Սևակ հատվածի 15-րդ կմ) |
| 6. | «Անանուն» ծայքավոր ստրուկտուրա | Երևան-Մեղրի խճուղու 81-րդ կմ (Տիգրանաշեն-Պարույր Սևակ հատվածի 15-րդ կմ) |
| 7. | «Անանուն» ծայքագոյացման մերկացում | Ուրցաձոր գյուղից 4,5 կմ դեպի հս, Վեդի գետի աջ ափին |
| 8. | «Հորթունի» բրածո ֆլորա | Զանգակատուն գյուղից 8 կմ հս-արլ |
| 9. | «Ջերմանիսի» բրածո ֆլորա | Ուրցաձոր գյուղից մոտ 20 կմ գետի հոսանքով վեր, նախկին Ջերմանիս գյուղատեղիի մոտակայքում |
| 10. | «Վեդի գետի ավազանի» բրածո ֆաունա | Վեդի գետի ավազան, Ուրցաձոր գյուղից 15 կմ հս-արլ |
| 11. | «Աղակալած ճահճուտ» | քաղ. Արարատ, հանքային աղբյուրների մոտ, ծ.մ-ից մոտ 850 մ բարձրության վրա |

ձկնաբուծարանի համար հայցվող տարածքում բնության հուշարձաններ հաշվառված չեն: Հայցվող տարածքին ամենամոտ գտնվող բնության հուշարձանը «Դաշտաքար» քարանձավն է, հեռավորությունը կազմում է ավելի քան 28կմ:

Հայաստանի Հանրապետությունը վավերացրել է կենսաբազմազանության պահպանությանը վերաբերող Եվրախորհրդի Բեռնի կոնվենցիան, որի շրջանակներում ՀՀ տարածքում «Էմերալդ» ցանցի ստեղծման նպատակով առանձնացվել են բնապահպանական տեսակետից 23 արժեքավոր տարածքներ: Ներկայումս Հայաստանի «Էմերալդ» ցանցի թեկնածու-տարածքների նախնական ցանկը գտնվում է վերանայման փուլում:

Նորամարզի ձկնաբուծարանի տեղամասը չի գտնվում «Էմերալդ» ցանցի թեկնածու-տարածքներից որևիցե մեկի սահմաններում:

3. ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

- *Ենթակառուցվածքներ*

Նորամարզի ձկնաբուծարանը վարչատարածքային բաժանման տեսակետից գտնվում է ՀՀ Արարատի մարզում:

2022թ.-ի հունվարի 1-ի դրությամբ մարզի ընդհանուր տարածքը՝ 2090.03 ք.կմ է, ինչը կազմում է Հայաստանի Հանրապետության տարածքի մոտ 7%-ը: Համայնքների թիվը՝ 5, բնակավայրերի թիվը՝ 95:

Մարզն ունի շուրջ 256.6 հազար բնակչություն, որից 72.0 հազ. քաղաքաբնակներ են (28%), 184.6 հազարը՝ գյուղաբնակ (71%): Մարզը բնակչությամբ համարյա միատարր է, հիմնականում բնակեցված է հայերով՝ 93%, ազգային փոքրամասնություններից մարզում ապրում են եզդիներ 2.5%, ասորիներ 0,09%, քրդեր 0.05%, ռուսներ 0.4%:

Մարզի մշտական բնակչությունը ըստ տարածաշրջանների հետևյալն է՝ Արարատ 20.4 հազար մարդ, Արտաշատ 19.3 հազար մարդ, Մասիս 20.6 հազար մարդ, Վեդի 11.8 հազար մարդ:

Արարատի մարզում բնակչության տեղաբաշխումը հավասարաչափ չէ, ամենամեծ կուտակումը մարզում Արտաշատի և Մասիսի տարածաշրջաններում են՝ հիմնականում հարթավայրային մասում դեպի մայրաքաղաքի ուղղությամբ, դեպի նախալեռնային և լեռնային բնակավայրեր՝ բնակչության խտությունը կտրուկ նվազում է:

Արարատի մարզում տնտեսական ակտիվության ցուցանիշը կազմել է 69.3%, որը հանրապետական միջին ցուցանիշից բարձր է 6.8%-ով: Տարբերություններ կան տղամարդկանց (71.7%) և կանանց (65.2%), ինչպես նաև քաղաքային (44%) և գյուղական (82%) տարածքների միջև: Համեմատած Արմավիրի մարզի հետ տնտեսական ակտիվության մակարդակը բարձր 1.7%-ով:

ՀՀ Արարատի մարզում առկա են 7087 գործող (ակտիվ) ձեռնարկություններ, որը կազմում է հանրապետության մարզային ցուցանիշի 11.6%-ը, 10000 բնակչի հաշվով ձեռնարկությունների թիվը կազմում է 274, իսկ Արմավիրի մարզում առկա են 9087 գործող (ակտիվ) ձեռնարկություններ, որը կազմում է հանրապետության մարզային ցուցանիշի 14.9%-ը, 10000 բնակչի հաշվով ձեռնարկությունների թիվը

կազմում է 341: Ինչպես և ՀՀ բոլոր մարզերում այստեղ նույնպես ձեռնարկությունների գերակշռող մասը ունի մի քանի աշխատող և կարող են համարվել ՓՄՁ ձեռնարկություններ:

Մարզի տնտեսության հիմնական ցուցանիշներն ըստ ՀՀ տնտեսության ճյուղերի հետևյալն են՝

արդյունաբերություն՝ 12.9 %, գյուղատնտեսություն՝ 14.1 %, շինարարություն՝ 2.1 %, մանրածախ առևտուր՝ 2.7 %, ծառայություններ՝ 1.6 %:

Մարզը Հայաստանի արդյունաբերական և գյուղատնտեսական առաջատարներից է՝ այստեղ մեկ շնչի հաշվով արտադրվող արդյունաբերական արտադրանքը ավել է քան ՀՀ միջին ցուցանիշը շուրջ 1.5 անգամ, իսկ գյուղատնտեսական արտադրանքը շուրջ 1.6 անգամ, այլ ոլորտներում մարզը զգալիորեն զիջում է ՀՀ միջին ցուցանիշներին:

Արդյունաբերություն Արարատի մարզը Հայաստանի Հանրապետության զարգացած արդյունաբերական մարզերից է: ՀՀ արդյունաբերության ծավալի 12.9 %-ը կազմում է Արարատի մարզի արդյունաբերական ձեռնարկությունների արտադրանքը: Արարատի մարզի տնտեսության մեջ էական կշիռ ունեն գինու-կոնյակի 10-ից ավելի խոշոր գործարանները, “Արարատ – ցեմենտ”, “Ոսկու կորգման ֆաբրիկան”, Արտաշատի, Արարատի պահածոների, “Մասիս տոբակո”, “Ինտերնեշնլ Մասիս տոբակո” գործարանները:

Արդյունաբերության առաջատար ուղղությունները սննդամթերքի, ներառյալ՝ խմիչքների, արտադրություններն են և այլ ոչ մետաղական հանքային արտադրատեսակների արտադրությունը:

Մարզի բազմաճյուղ արդյունաբերության հիմնական և գլխավոր ուղղությունը մշակող արդյունաբերությունն է, որի մեջ առավել զարգացած են հետևյալ 3 ճյուղերը.

- 1) սննդամթերքի և ըմպելիքի արտադրություն (մրգերի, բանջարեղենի վերամշակում և պահածոյացում, թորած ալկոհոլային խմիչքների արտադրություն)
- 2) ծխախոտի արտադրություն (ծխախոտի խմորում՝ ֆերմենտացիա)
- 3) ոչ մետաղական հանքային արտադրանքի արտադրություն (ցեմենտի, կրի, ազբոցեմենտային իրերի արտադրություն, քարի կտրում և վերամշակում):

Մարզի արդյունաբերական արտադրության 92.3%-ը բաժին է ընկել մշակող արդյունաբերությանը, որը հիմնականում գյուղմթերքի վերամշակությունն է և որը մեծապես պայմանավորված է մարզում գյուղատնտեսական բարձր արտադրողականությանը:

Արդյունաբերական արտադրանքի ծավալների վերաբերյալ տվյալները ներկայացված են աղյուսակ 12-ում:

Աղյուսակ 12.

| | Թողարկված արտադրանքի ծավալը, ընթացիկ գներով, ¹ մլն.դրամ Volume of produced production, in current prices ¹ , mln.drums | Պատրաստի արտադրանքի իրացումը, ընթացիկ գներով, ¹ մլն.դրամ Realisation of fabricated products in current prices ¹ , mln.drums | Արտադրանքի ֆիզիկական ծավալի ինդեքսը, % Volume index of of industrial production, % | |
|---|---|--|---|--|
| ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ ARARAT MARZ | | | | |
| Ամբողջ արդյունաբերությունը | 301 033.5 | 327 001.2 | 98.7 | Total industry |
| այդ թվում՝ | | | | including: |
| Հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործում | 1 694.0 | 2 420.2 | 138.0 | Mining and quarrying |
| այդ թվում՝ | | | | including: |
| հանքագործական արդյունաբերության և բացահանքերի շահագործման այլ ճյուղեր | 1 694.0 | 2 420.2 | 138.0 | other mining and quarrying |
| Մշակող արդյունաբերություն | 287 847.8 | 313 089.4 | 98.5 | Manufacturing |
| որից՝ | | | | of which : |
| սննդամթերքի արտադրություն | 48 796.9 | 48 236.1 | 118.3 | manufacture of food products |
| խմիչքների արտադրություն | 27 585.6 | 28 214.6 | 82.1 | manufacture of beverages |
| ծխախոտային արտադրատեսակների արտադրություն | 69 105.1 | 68 774.8 | 86.6 | manufacture of tobacco products |
| հագուստի արտադրություն | 738.4 | 832.5 | 104.6 | manufacture of wearing apparel |
| թղթի և թղթե արտադրատեսակների արտադրություն | 18 376.7 | 18 579.5 | 87.0 | manufacture of paper and paper products |
| քիմիական նյութերի և քիմիական արտադրատեսակների արտադրություն | 346.0 | 345.7 | 119.3 | manufacture of chemicals and chemical products |
| ռետինե և պլաստմասսայե արտադրատեսակների արտադրություն | 984.3 | 1 222.4 | 105.4 | manufacture of rubber and plastic products |
| այլ ոչ մետաղական հանքային արտադրատեսակների արտադրություն | 23 032.5 | 23 285.4 | 127.2 | manufacture of other non-metallic mineral products |
| հիմնային մետաղների արտադրություն | 96 833.8 | 121 717.2 | 102.5 | manufacture of basic metals |
| Էլեկտրականության, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում | 10 012.8 | 10 012.8 | 101.0 | Electricity, gas, steam, and air conditioning supply |
| Ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում | 1 478.9 | 1 478.9 | 93.3 | Water supply, sewerage, waste management and remediation activities |

Գյուղատնտեսություն. Արարատի մարզի տնտեսության հիմքը գյուղատնտեսությունն է՝ այն հիմնականում մասնագիտացած է պտղաբուծության,

խաղողագործության, բանջարաբուծության մեջ: Արարատի մարզի հարթավայրային և նախալեռնային գոտիները նպաստավոր են բուսաբուծության, իսկ լեռնային գոտիները՝ անասնապահության զարգացման համար: Մարզի ազգաբնակչության 71.5% բնակվում է գյուղական վայրերում, որոնց կենսունակությունը պայմանավորված է գյուղատնտեսական գործունեությամբ:

Մարզի գյուղատնտեսական հողատեսքերը՝ ներառյալ տնամերձերը՝ 164 696 հա, կազմում են մարզի ընդհանուր տարածքի 78.8%-ը: Գյուղատնտեսական հողատեսքերի 7.6%-ը: կազմում են մշակովի տարածքները՝ ներառյալ տնամերձերը 42 260 հա:

Մարզի ակտիվ գյուղատնտեսական ուղղվածության ձեռնարկությունները 31- են, որոնցից 6-ը զբաղվում են կաթի վերամշակմամբ, 2-ը՝ մսի, մնացած 23-ը՝ բուսաբուծական մթերքների վերամշակմամբ: Վերամշակող կազմակերպությունների կողմից Արարատի մարզում ավելացել են 24.4%-ով, հանրապետությունում՝ 44.6%-ով:

Մարզից արտահանվում է հիմնականում գյուղմթերքի վերամշակումից ստացված արտադրանք՝ զինի, կոնյակ, միրգ, բանջարեղեն, պահածոյացված գյուղմթերք՝ և հանրապետությունու և հանրապետությունից դուրս մեծ պահանջարկ ունեն Արարատի մարզի քաղցրահամ մրգերը, բարջարեղենը, մուրաբաները, բնական հյութերը, չրերը: Մարզի արտահանման մեջ մեծ ծավալներ են կազմում բնական հանքաքարերի արտահանումը:

Գյուղատնտեսական համախառն արտադրանքը կազմել է 125.0լն.դրամ, որից բուսաբուծությունը՝ 94.0մլն. դրամ, անասնաբուծությունը՝ 31.0մլն.դրամ:

Հացահատիկային և հատիկաընդեղենային մշակաբույսերի ցանքսատարածությունը կազմել են 2568հա, միջին բերքատվությունը՝ 36.4g/հա, խամախառն բերքը՝ 9.6հազ.տ:

Կարտոֆիլի ցանքսատարածությունը կազմել են 508հա, միջին բերքատվությունը՝ 285.1g/հա, խամախառն բերքը՝ 14.5հազ.տ:

Բանջարանոցային մշակաբույսերի համար վերը նշված ցուցանիշները կազմել են համապատասխանաբար 5110հա, 400.2g/հա և 227.1հազ.տ, բոստանային մշակաբույսերի համար՝ 981հա, 382.7g/հա և 37.5հազ.տ, պտղի և հատապտղի տարածությունների դեպքում՝ 8630հա, 104.3g/հա և 79.7հազ.տ:

Խաղողի տնկարկների տարածքությունները կազմել են 4849հա, միջին բերքատվությունը՝ 272.3ց/հա, խամախառն բերքը՝ 123.7հազ.տ:

Խոշոր եղջրավոր կենդանիների գլխաքանակը կազմել է 45.4հազ.գլուխ, այդ թվում կովեր՝ 14.4հազ.գլուխ, խոզեր 21.7հազ.գլուխ, ոչխարներ և այծեր՝ 100.5հազ.գլուխ, ձիեր՝ 0.9հազ.գլուխ:

Իրականացվել է 24160.2մլն.դրամի շինարարություն և 23114.1մլն.դրամի շինմոնտաժային աշխատանքներ:

Ձկնաբուծարանի համար ընտրված տեղամասը գտնվում է Մասիս խոշորացված համայնքի Նորամազ բնակավայրի սահմաններում:

Նորամազ գյուղն ունի 389 տնտեսություն: Բնակչությունը 2101 մարդ է, որից 49%-ը տղամարդիկ են, 51%-ը՝ կանայք:

Բնակավայրի վարչական տարածքը կազմում է 1870.0հա, որից գյուղատնտեսական նշանակության հողերը՝ 709.4հա, մշակովի հողատարածքները՝ 709.4հա, արոտավայրեր՝ 309.46հա, խոտհարքեր 152.94հա:

Նորամազ համայնքի գյուղատնտեսության ճյուղային կառուցվածքում առանձնանում են՝ բանջարաբուծությունը, բոստանային կուլտուրաների և անասնակերի արտադրությունը, կաթնատու և մսատու անասնապահությունը և ձկնաբուծությունը:

Գյուղում պահոծոների արտարամաս՝ 1, ՓՄՁ՝ 7 (որից 1-թռչնաբուծական, 6-ձկնարդյունաբերական), խանութներ՝ 7 հատ:

Բնակավայրում գործում է բուժամբուլատորիա, որտեղ աշխատում են բժիշկ և բուժքույր:

Գյուղում գործում է միջնակարգ դպրոց և մսուր-մանկապարտեզ:

Հայցվող 03-068-0406-0022 կադաստրային ծածկագրով տարածքը հաշվառված է որպես ֆիզիկական անձի սեփականություն հանդիսացող արոտավայր և խոտհարք:

Ձկնաբուծարանի ստեղծման ծրագիրը և շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտը ներկայացվել են համայնքների բնակիչներին:

Քննարկվել է բնակավայրում նոր աշխատատեղերի ստեղծման և իրականացվելիք սոցիալ-տնտեսական աջակցության ծրագրերի հարցը :

- ***Պատմության, մշակութային հուշարձաններ***

ՀՀ կառավարության 2002 թվականի հունվարի 24-ի թիվ 65-Ն որոշմամբ հաստատվել է ՀՀ Արարատի մարզի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ցանկը:

Նորամարզ բնակավայրում պատմության և մշակույթի անշարժ հուշարձաններ հաշվառված չեն:

4. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ

ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Ձկնաբուծարանի ավազանների փորման աշխատանքների ընթացքում աննշան տեխնաձին ճնշումներ են դրսևորվելու մթնոլորտի, հողային ծածկույթի, բուսական և կենդանական աշխարհի, ինչպես նաև լանդշաֆտային ամբողջականության վրա:

Մթնոլորտային օդ.

Կիրառվող ավտոտրանսպորտը և տեխնիկան դառնալու են վնասակար գազերի և փոշու արտանետման աղբյուր:

Համաձայն շրջակա միջավայրի պահպանությանը վերաբերվող նախագծման նորմերի (СНИП 11-01-95, СНИП 1.02.01-85)՝ սահմանային թույլատրելի խտությունները ածխածնի օքսիդի, ազոտի օքսիդի, մրի և ծծմբային գազի համար համար համապատասխանաբար կազմում են 0,0005գ/մ³; 0,000085գ/մ³; 0,00015գ/մ³; 0,0005գ/մ³:

Նախնական հաշվարկներին համաձայն, աշխատանքների ընթացքում վնասակար գազերի (ազոտի օքսիդ, ածխածնի երկօքսիդ, մուր) առավելագույն կոնցենտրացիաները չեն գերազանցելու նորմատիվային փաստաթղթերով ամրագրված սահմանային թույլատրելի խտությունները:

Ջրային ավազան. Հրազդան գետի հունը գտնվում է հայցվող տարածքից մոտ 1կմ, Արաքս գետը՝ մոտ 450մ հեռավորությունների վրա ;

Ջրային ռեսուրսների աղտոտում տեղի չի ունենա, քանի որ մեքենաների տեղաշարժը իրականացնելիս նախատեսվում է օգտագործել առկա ճանապարհները և կամրջակները, ինչը կբացառի մակերևութային ջրերի աղտոտումը նավթամթերքներով: Տեղամասում կառուցվելու է դաշտային տիպի անթափանց արտաքնոցի հոր, այն տեղադրվելու է այնպես, որ բացառվի ջրային ռեսուրսի ցանկացած աղտոտումը :

ՀՀ կառավարության 2005 թվականի հունվարի 20-ի թիվ 64-Ն որոշմամբ ջրակոհամակարգերի սանիտարական պահպանման, հոսքի ձևավորման, ստորերկրյա ջրերի պահպանման, ջրապահպան, էկոտոնի և անօտարելի գոտիների սահմանման համար նախատեսված է այդ տարածքների տարածքների փաստացի չափերի ու սահմանագծերի հաստատում: Դրանք պետք է սահմանվեն ելնելով

յուրաքանչյուր ջրային ռեսուրսի առանձնահատկություններից՝ Ջրի ազգային ծրագրի շրջանակներում դաշտային աշխատանքների իրականացման միջոցով: Նշված աշխատանքները դեռևս չեն կատարվել:

ՀՀ կառավարության 2005 թվականի հունվարի 20-ի թիվ 64-Ն որոշման հավելվածի 6-րդ կետով նախատեսված է, որ ջրային ռեսուրսների աղբոսման, աղտոտման, տղմակալման և հյուծման կանխարգելման նպատակով պետք է սահմանվի ջրապահպան գոտիներ: Այս պահանջը լիարժեք ապահովված է, հաշվի առնելով մինչև Արաքս և Հրազդան գետերը առկա հեռավորությունները:

Հողային ծածկույթ.

Ջրավազանների տարածքում խախտվելու է լանդշաֆտային ամբողջականությունը, հեռացվելու է հողի վերին շերտը՝ առավելագույնը 10սմ հզորությամբ:

Հնարավոր է արտադրական հրապարակի աղտոտում նավթամթերքներով:

Բուսական և կենդանական աշխարհ.

Աշխատանքների բացասական ազդեցությունը տեղամասի տարածաշրջանի բուսական և կենդանական աշխարհի վրա գրեթե զրոյական է, քանի որ տեղամասի բուսածածկը ներկայացված է ՀՀ տարածքում ամենուրեք աճող տափաստանային տարախոտային բուսատեսակներով, առանձին թփերով:

Խոշոր կաթնասունների բնադրավայրեր, որջեր, բներ ձկնաբուծարանի համար հայցվող տեղամասում չեն դիտարկվել:

Կենդանական աշխարհի վրա առավել ազդեցիկ, կարճաժամկետ գործոնը կապված է լինելու աղմուկի հետ:

Տեղամասում չեն արձանագրվել նաև ՀՀ Բույսերի կամ Կենդանիների Կարմիր գրքերում գրանցված տեսակներ, հետևաբար օգտակար հանածոների երկրաբանական ուսումնասիրության ազդեցությունը տարածքի կենսաբազմազանության վրա լինելու է նվազագույն :

Աղտոտում թափոններով. Աշխատանքների ընթացքում առաջանալու է կենցաղային աղբ, օրեկան մինչև 10կգ ծավալով, որը պատկանում է վտանգավորության 4-րդ դասին, ծածկագիր՝ 9120040001004 :

Տեխնիկական միջոցների, ավտոտրանսպորտի շահագործման ընթացքում առաջանալու են բանեցված օդաճնշիչ դողեր (ծածկագիրը՝ 5750020013004, վտանգավորության դասը՝ 4), բանեցված կապարե կուտակիչներ և խոտան (ծածկագիրը՝ 9211010013012, վտանգավորության դասը՝ 2), իրենց սպառողական հատկությունները կորցրած ավտոմոբիլային յուղերի մնացորդներ (ծածկագիրը՝ 5410030202033, վտանգավորության դասը՝ 3), յուղոտված լաթեր (ծածկագիրը՝ 5820060001014, վտանգավորության դասը՝ 4) :

Այս թափոնները տեղափոխվելու են վերամշակում իրականացնող մասնագիտացվախ ընկերությունների տարածք, ինչի նպատակով ձկնաբուծարանի ստեղծման համար պետական կառավարման մարմինների թույլտվությունը ստանալուց հետո կնքվելու են համապատասխան պայմանագրերը :

Ավազանների փորման աշխատանքների ժամանակ առաջացած հողագրունտը օգտագործվելու է խախտված տարածքների վերականգման, ավազանների եզրային բերմաների բարձրացման, արտադրական հրապարակի հարթեցման և առկա ճանապարհների բարեկարգման նպատակով, իսկ վերին 5-10սմ հզորությամբ աղուտ-ալկալի հողային շերտը, համապատասխան պարարտացումից հետո, կիրառվելու է տարածքի կանաչապատման և բարեկարգման համար :

Աղուտ-ալկալի հողերը և հողագրունտը թափոն չի հանդիսանում, դա բնական պաշար է :

Աղմուկ և թրթռումներ.

Փորման աշխատանքների ընթացքում պայթեցման աշխատանքներ չեն նախատեսվում:

Մոտակա Նորամարգ բնակավայրի տարածքում աղմուկի նորմավորման հետ կապված խնդիրները կանոնակարգվում է «Աղմուկն աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում և բնակելի կառուցապատման տարածքներում» N2-111-11.3 ՀՀ սանիտարական նորմերով:

Համաձայն գործող նորմատիվ փաստաթղթերի, արտադրական կազմակերպությունների մշտական աշխատատեղերով տարածքներում աղմուկի (ձայնի) առավելագույն մակարդակը չպետք է գերազանցի 95դԲԱ, իսկ արտադրական կազմակերպությունների մշտական աշխատատեղերում՝ 80դԲԱ: Նախնական գնահատականներով, ավազանների փորման ժամանակ առաջացած ձայնային ալիքի ուժգնությունը Նորամարգ գյուղի մոտ չի գետազանցի 20դԲԱ:

Փորման աշխատանքների ժամանակ առաջանալու է առաջին կարգի թրթռում (վիբրացիա), որը կապված է տեղաշարժվող ինքնագնաց մեքենաների, տրանսպորտային միջոցների և հորատման աշխատանքի հետ: Թրթռումների սահմանային թույլատրելի մակարդակը Z առանցքով չպետք է գերազանցի 115դԲԱ, իսկ X-Y առանցքներով՝ 112դԲԱ:

Նորմատիվային փաստաթղթերով սահմանված ցուցանիշներն ապահովելու համար են մի շարք բնապահպանական կառավարման միջոցառումներ, որոնց նկարագիրը ներկայացված է ստորև, 5-րդ գլխում:

Ստորև բերվում է շրջակա միջավայրի բաղադրիչների վրա հնարավոր ազդեցության նախնական գնահատական մատրիցը:

Աղյուսակ 13.

| Շրջակա միջավայրի բաղադրիչներ | Գործողություններ | | |
|-------------------------------------|-----------------------------------|-------------------|---------------------|
| | Մոտեցնող ճանապարհների բարեկարգում | Ավազանների փորում | Տարածքի բարեկարգում |
| Մթնոլորտային օդ | ցածր կարճատև | ցածր կարճատև | ցածր կարճատև |
| Ջրեր | - | աննշան | - |
| Հողեր | աննշան | աննշան | աննշան |
| Կենսաբազմազանություն | աննշան | աննշան | աննշան |
| Պատմամշակութային հուշարձաններ | - | - | - |
| Բնության հատուկ պահպանվող տարածքներ | - | - | - |

**5. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ
ԲՆՈՒԹԱԳԻՐԸ**

Շրջակա միջավայրի բաղադրիչների վրա վնասակար ազդեցության մեղմացման/վերացման նպատակով նախատեսվում են հետևյալ բնապահպանական միջոցառումները.

- a. Օգտագործված յուղերի ու քսայուղերի հավաքում առանձին տարրաների մեջ՝ հետագայում ուտիլիզացման կամ երկրորդական վերամշակման համար:
- b. Հնամաշ դետալների ու մասերի հավաքում հատկացված առանձին տեղում և հանձնվում որպես մետաղական ջարդոն :
- c. Կենցաղային աղբի կուտակում 60լ տարողությամբ տոպրակների մեջ և տեղափոխում գործող աղբվայրեր, ինչի նպատակով տեղական ինքնակառավարման մարմինների հետ նախատեսվում է կնքել համապատասխան պայմանագիր:
- d. Արտաթորվող թունավոր նյութերի չեզոքացուցիչ սարքերի (ծխագազերի ֆիլտրներ) տեղադրում :
- e. Տեղամասում տիպային երկաթբետոնե սալիկների տեղադրում՝ էքսկավատորի տեղաշարժի իրականացման ընթացքում նավթամթերքներով տարածքի աղտոտումը կանխելու համար:
- f. Ջրապահպան գոտիների սահմանում և ապահովում:
- g. Փոշենստեցման նպատակով մոտեցնող ճանապարհի, աշխատանքային հրապարակի ջրում տարվա չոր և շոգ եղանակներին :
- h. Աշխատանքների ավարտից հետո հորատից զուգարանի դատարկում են հատուկ ծառայության ուժերով :
- i. Տեղամասի բարեկարգում, կանաչապատում արագ աճող չորադիմացկուն ծառատեսակներով:
- j. Հողաբուսական շերտի առանձնացված կուտակում հայցվող տեղամասի սահմաններում, պարարտացում, հողաթմբի մակերեսին բազմամյա բույսերի

ցանքի կատարում: Դա թույլ կտա բացառել կուտակված հողերի էռոզիան, հարստացնել հումինային միացություններով:

կ. Ըստ կիրառելիության ՀՀ կառավարության 31.07.2014թ.-ի N 781-Ն որոշման դրույթների ապահովում:

լ. ՀՀ կառավարության 31.07.2014թ.-ի թիվ 781-Ն որոշմամբ սահմանված դեպքերում՝ ըստ կիրառելիության, բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության միջոցառումների իրականացում:

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության ներկայացնելիս ընկերության կողմից գործունեության հայտում և հետագայում՝ գնահատման հաշվետվության մեջ ներառվում և հետագայում իրականացվում են հողերում առկա օբյեկտների պահպանությանն ուղղված հետևյալ միջոցառումները՝

1) վայրի բուսատեսակների և դրանց պոպուլյացիաների վիճակի ուսումնասիրության (տեսակային կազմ, տարածվածություն, քանակ) իրականացում, որի տվյալները սահմանված կարգով տրամադրվում են բուսական աշխարհի պահպանության, պաշտպանության, օգտագործման և վերարտադրության բնագավառում լիազորված պետական մարմին.

2) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ արգելված թունաքիմիկատների օգտագործման կանխարգելում:

Տեղամասում Հայաստանի Հանրապետության բույսերի Կարմիր գրքում (այսուհետ՝ կարմիր գիրք) գրանցված տվյալ բուսական տեսակի նոր պոպուլյացիաների հայտնաբերման դեպքում դրանց պահպանության նպատակով նախատեսվում է՝

1) առանձնացնել օգտագործման նպատակով տրամադրված տարածքում պահպանվող գոտիներ, որոնք ունեն տեղական նշանակություն և անհրաժեշտ են կարմիր գրքում գրանցված բուսատեսակների՝ սույն կետում նշված նոր պոպուլյացիաների կենսունակության ապահովման նպատակով.

2) ժամանակավորապես սահմանափակել առանձնացված պահպանվող գոտիներում տնտեսական գործունեության որոշ տեսակներ, եթե դրանք կարող են բերել նշված բուսատեսակների աճելավայրերի վիճակի վատթարացմանն ու պոպուլյացիաների կենսունակության խաթարմանը.

3) սույն կետի 1-ին և 2-րդ ենթակետերում նշված միջոցառումների իրականացման անհնարինության դեպքում կարմիր գրքում, որպես տվյալ բույսի աճելավայր չգրանցված տարածքներից, բույսերի բնական վերարտադրության նպատակով տեղափոխում են տնտեսական գործունեության արդյունքում ոչնչացման սպառնալիքի տակ գտնվող բույսերի առանձնյակները տվյալ տեսակի համար նպաստավոր բնակլիմայական պայմաններ ունեցող որևէ բնության հատուկ պահպանվող տարածք կամ բուսաբանական այգիների տարածք, կամ կարմիր գրքում որպես տվյալ բույսի աճելավայրեր գրանցված որևէ տարածք, իսկ բույսերի սերմերը տրամադրում են համապատասխան մասնագիտացված կազմակերպությանը՝ գենետիկական բանկում պահելու և հետագայում տեսակի վերարտադրությունը կազմակերպելու նպատակով:

մ. Տեղամասում Հայաստանի Հանրապետության բույսերի կարմիր գրքում գրանցված տեսակների հայտնաբերման դեպքում ձեռնարկել միջոցառումներ դրանց պահպանության համար՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով, համաձայնեցնելով դրանք պետական կառավարման լիազոր մարմնի հետ:

ն. Տեղամասում Հայաստանի Հանրապետության Կարմիր գրքում գրանցված կենդանիների հայտնաբերման դեպքում, ընկերությունը պարտավոր է միջոցներ ձեռնարկել դրանց պահպանության համար, բացառելով տեսակների թվաքանակի կրճատումը և դրանց ապրելավայրերի վատթարացումը: Միջոցառումները պետք է համաձայնեցվեն պետական կառավարման լիազոր մարմնի հետ:

օ. Պատահական գտածոների ընթացակարգի կիրառում՝ հետևյալ միջոցառումների իրականացման միջոցով.

- ✓ համապատասխան անձնակազմի և պայմանագրով աշխատողների ուսուցում պատահական հնագիտական գտածոների ճանաչման, դրանց հետ վարվելակերպի և արձագանքի ուղղությամբ;
- ✓ գտածոների ուսումնասիրություն հրավիրված հնագետների կողմից, որպեսզի վերջիններս ուղղորդեն հնագիտական գտածոների ճանաչման և արձագանքման գործընթացը,

- ✓ արձանագրությունների կազմում պատահական գտածոներին արձագանքելու համար, ներառյալ աշխատանքի ժամանակավոր դադարեցումը գտածոների հայտնաբերման վայրում;
 - ✓ պետական մարմինների ծանուցում,
 - ✓ պատահական գտածոների գնահատման և պեղումների արագացված ընթացակարգերի կիրառում, ազդեցությունների սահմանափակման համար, միաժամանակ նվազեցնելով շահագործական աշխատանքների ուշացումները:
- բ. Ծրագրավորվող աշխատանքներին մասնակցող անձնակազմը անցնելու է հատուկ վերապատրաստում և ծանոթանալու է ՀՀ Արարատի մարզում հայտնի ՀՀ կենդանիների և բույսերի Կարմիր գրքերում գրանցված տեսակների հետ:
- գ. Աշխատակիցների հրահանգավորում, ծանոթություն անվտանգության տեխնիկայի կանոններին:
- դ. Աշխատանքային հրապարակի պարագծով տեղադրվելու են նախագգուշացնող նշաններ, ինչը թույլ կտա կանխել անվտանգության տեխնիկայի հրահանգավորում չանցած մարդկանց մուտքը հայցվող տարածք:
- ե. Աշխատանքների ժամանակ տեղամասի մթնոլորտային օդի և հողային ծածկույթի պարբերական մոնիթորինգի իրականացում:

Բնապահպանական միջոցառումների բնութագիրը ներկայացված են նաև աղյուսակ 14-ում:

Բնապահպանական միջոցառումների իրականացման նպատակով ընկերության շահագործման ծախսերից տարեկան կտրվածքով կնախատեսվի 720.0հազ.դրամ:

6. ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐ

Արտակարգ իրավիճակների պատրաստ լինելու համար աշխատանքներին մասնակցող անձնակազմը կապահովվի շարժական կապի և առաջին բուժօգնության միջոցներով:

Պարբերաբար իրականացվելու է անվտանգության կանոնների վերաբերյալ անձնակազմի գիտելիքների ստուգում:

Ավագանների փորման նպատակով հայցվող տարածքը հարում է Արարատյան դաշտի մասը կազմող հարթավայրին, որի թեքության անկյունը չի գերազանցում 4°: Մոտակա հայտնի սողանքային մարմինները քարտեզագրվել են տեղամասից ավելի քան 10կմ հեռավորության վրա, հետևաբար, սողանքային երևույթներով պայմանավորված արտակարգ իրավիճակ տեղամասում լինել չի կարող:

Տեղամասում արտակարգ իրավիճակները կարող են պայմանավորված լինեն հետևյալ գործոններով.

1) Երկրաշարժ՝ հաշվի առնելով, որ Հանրապետության տարածքը գտնվում է սեյսմիկ ակտիվ գոտում: Ըստ ՀՀ քաղաքաշինության նախարարի 2006 թվականի փետրվարի 3-ի «Սեյսմակայուն շինարարություն. նախագծման նորմեր» N 24-Ն հրամանի՝ տեղամասի տարածքը գտնվում է 1-ին սեյսմիկ գոտում, որին բնորոշ է 300սմ/վրկ² կամ 0.3g գրունտի հորիզոնական արագացման մեծություն:

Նախատեսվում է մշակել ուժեղ երկրաշարժերի դեպքում գործողությունների պլան՝ վտանգավոր տարածքներից աշխատակիցների ապահով տարահանումն իրականացնելու նպատակով: Անվտանգության տեխնիկայի կանոնների վերաբերյալ հրահանգավորում իրականացնելու ժամանակ առանձին ներկայացվելու են նաև երկրաշարժերի ժամանակ աշխատակիցների պահվածքի կանոնները, գործողությունների հաջորդականությունը: Աշխատանքները սպասարկող կենցաղային նշանակության վազոն-տնակում նախատեսվում են առաջին օգնության դեղորայքային փաթեթներ:

2) Հրդեհներ՝ կապված մարդածին գործոնների հետ: Հրդեհային անվտանգությունն ապահովելու համար աշխատակիցները տեղեկացվելու են տեխնոլոգիական պրոցեսներում օգտագործվող նյութերի հրդեհավտանգության վերաբերյալ: Նշանակվելու է հրդեհային անվտանգության համար պատասխանատու անձ, մշակվելու է հրդեհի դեպքում անձնակազմի գործողությունների պլան:

Տեղամասում՝ հատուկ հատկացված վայրում տեղադրվելու են հրդեհաշիջման սկզբնական միջոցներ՝ կրակմարիչներ, ավազով արկղ, բահ:

3) Անբարենսպաստ օդերևութաբանական պայմանների (քամու արագացում, անհողմություն, անոմալ բարձր շոգ կամ ցուրտ, թանձր մառախուղ, ամպրոպ): Անբարենսպաստ օդերևութաբանական պայմանների իհայտ գալու դեպքում կիրառվում են հետևյալ միջոցառումները (ըստ իրավիճակի).

- ավելացվում է կատարվելիք ջրցանը,
- կրճատվում է աշխատանքի տևողությունը,
- կրճատվում է միաժամանակ աշխատող մեքենաների և մեխանիզմների քանակությունը,
- նվազեցվում է փոշեգոյացման հետ կապված աշխատանքների ծավալները,
- բեռնատար մեքենաները կահավորվում են հատուկ մառախուղի լույսերով,
- աշխատակիցները պատսպարվում են արտադրական հրապարակում տեղադրված վագոն-տնակում:

4) Արաքս գետի վարարում՝ ապրիլի վերջից-հունիսի վերջ: Աշխատանքների տարածքը վարարման ժամանակ ջրով չի վրածածկվելու, քանի որ տեղամասի և Արաքս գետի հունի միջև, տեղամասից մոտ 140մ հեռավորության վրա է գտնվում պաշտպանիչ արգելաթումբը:

Աշխատանքների անվտանգ իրականացման նպատակով.

- աշխատանքի են թույլատրվում անձիք, որոնք ունեն հատուկ պատրաստվածություն և որակավորում,
- օգտագործել մեքենաներ և մեխանիզմներ, սարքավորումներ և նյութեր, որոնք համապատասխանում են անվտանգության պահանջներին և սանիտարական նորմերին,
- անցկացնել պլանային-զգուշացնող համալիր վերանորոգումներ, պրոֆիլակտիկ աշխատանքներ և այլ դիտարկումներ,
- աշխատանքի ժամանակ պետք է պահպանվեն անվտանգության տեխնիկայի կանոնները:

Բնապահպանական միջոցառումների բնութագիր

| Գործողություն | Հնարավոր ազդեցություն | Մեղման միջոցառում | Մեղման հայտանիշ |
|-----------------------------|--|--|--|
| 1. Աշխատանքի անվտանգություն | Վնասվածքներ և պատահարներ աշխատանքների կատարման վայրում | <ul style="list-style-type: none"> - Աշխատողներն ապահովվում են Անհատական Պաշտպանության Միջոցներով (ԱՊՄ) - Սարքավորումների շահագործվում են ԱՊՄ օգտագործման կանոնների խիստ պահպանում - Աշխատակիցները իրազեկվում են պաշտպանության հրահանգների վերաբերյալ | - Ջնման ընթացքում սարքավորումների շահագործման և օգտագործման հրահանգների խախտումներ չեն արձանագրվել |
| 2. Փորման աշխատանքներ | Օդի աղտոտում փոշիով և արտանետումներով | - Փոշեգոյացման կանխում փորման և հողագրունտի հանման ժամանակ | - Ճանապարհների և աշխատանքային հրապարակի թրջում |

| Գործողություն | Հնարավոր ազդեցություն | Մեղման միջոցառում | Մեղման հայտանիշ |
|---------------|---|---|---|
| | | <ul style="list-style-type: none"> - Աշխատանքների կատարման վայրում նյութերի/ թափոնների բաց այրման արգելում - Տեխնիկան և մեքենաները պահել պատշաճ տեխնիկական վիճակում՝ բացառելով ավելորդ արտանետումները - Տարածքի մթնոլորտային օդում փոշու պարունակությունների չափում տարեկան երկու անգամ հաճախականությամբ | <ul style="list-style-type: none"> - Չննման ընթացքում աշխատանքների կատարման վայրում նյութերի/ թափոնների բաց այրում չի հայտնաբերվել - Չննման ընթացքում տեխնիկան և մեքենաները շահագործվել են առանց հավելյալ արտանետումների - Մոտակայքի բնակիչներից բողոքներ չեն եղել |
| | Կայանատեղիի տարածքում հողերի աղտոտում նավթամթերքներով | <ul style="list-style-type: none"> - Տարածքի հիմնային հատվածի կառուցման ժամանակ խտացված հողագրունտի շերտի ձևավորում թրթռացող ճանապարհային գլանների կիրառմամբ | <ul style="list-style-type: none"> - Նավթամթերքների արտահոսքի բացառում |

| Գործողություն | Հնարավոր ազդեցություն | Մեղման միջոցառում | Մեղման հայտանիշ |
|---------------|-----------------------|--|--|
| | | <ul style="list-style-type: none"> - Կայանատեղիի մակերեսին նավթամթերքների արտահոսքերի պարբերական մշտադիտարկում (ամսեկան մեկ անգամ հաճախականությամբ) | |
| | Աղմուկ | <ul style="list-style-type: none"> - Սահմանված աշխատանքային ժամերի պահպանում - Գեներատորների, օդի կոմպրեսորների և այլ ուժային մեխանիկական սարքավորումների շարժիչների ծածկերի փակում շահագործման ընթացքում - Աղմկախլացուցիչների տեղադրում շարժական կայանների և սարքավորումների | <ul style="list-style-type: none"> - Աշխատանքային ժամերից հետո ոչ մի աշխատող սարքավորում չի հայտնաբերվել - Չննման ընթացքում սարքավորումները եղել են բավարար տեխնիկական վիճակում - Չննման ընթացքում միացված չօգտագործվող սարքավորումներ չեն հայտնաբերվել |

| Գործողություն | Հնարավոր ազդեցություն | Մեղման միջոցառում | Մեղման հայտանիշ |
|---------------|-----------------------|---|---|
| | | <p>վրա</p> <ul style="list-style-type: none"> - Սարքավորումների կանխարգելիչ վերանորոգում ադմուկը նվազեցնելու նպատակով - Ոչ անհրաժեշտ և չօգտագործվող սարքավորումների անջատում | <ul style="list-style-type: none"> - Սոտակայքի բնակիչներից բողոքներ չեն եղել |
| | Բուսական աշխարհ | <ul style="list-style-type: none"> - Տարածքի բարեկարգում, կանաչապատում - Վայրի բուսատեսակների և դրանց պոպուլյացիաների վիճակի ուսումնասիրություն (տեսակային կազմ, տարածվածություն, քանակ): | <ul style="list-style-type: none"> - Վերականգնված լանդշաֆտ - Դաշտային հետազոտությունների տվյալների առկայություն հաշվետվության կազմման համար |
| | Կենդանական աշխարհ | <ul style="list-style-type: none"> - Ադմուկի սահմանված մակարդակի վերահսկում | <ul style="list-style-type: none"> - Աշխատանքային ժամերից հետո ոչ մի աշխատող սարքավորում |

| Գործողություն | Հնարավոր ազդեցություն | Մեղման միջոցառում | Մեղման հայտանիշ |
|---------------|-----------------------|---|---|
| | | <ul style="list-style-type: none"> - Անձնակազմի ուսուցում ՀՀ կենդանիների կարմիր գրքում գրանցված տեսակների վերաբերյալ | <ul style="list-style-type: none"> չի հայտնաբերվել - Հազվագյուտ տեսակների վրա բացասական ազդեցությունների կանխարգելում - Մոտակայքի բնակիչներից բողոքներ չեն եղել |
| | Հողագրունտ | <ul style="list-style-type: none"> - Տեսակավորում՝ դասակարգիչի կիրառմամբ - Մեծաբեկորային զանգվածի կիրառում շինարարական աշխատանքների ժամանակ - Օգտագործում միջավայրային տարածքի համահարթեցման նպատակով - մոտ 1.5հազ.մ³ հողաբուսական շերտի օգտագործում տարածքի | <ul style="list-style-type: none"> - Թափոնների ծավալի կրճատում: - Հողագրունտի նպատակային և համալիր օգտագործում: - Տարածքի բարեկարգում և կանաչապատում: - Վիզուալ ընկալման տեսակետից բարենպաստ լանդշաֆտի ձևավորում: |

| Գործողություն | Հնարավոր ազդեցություն | Մեղման միջոցառում | Մեղման հայտանիշ |
|-----------------------|--|--|---|
| | | <p>կանաչապատման համար</p> <ul style="list-style-type: none"> - մոտ 7հազ.մ³ հողաբուսական շերտի կուտակում հատուկ հողաթմբում, որի մակերեսին կկատարվի բազմամյա բույսերի ցանք՝ էռոզիան կանխելու նպատակով: - Կուտակված հողաբուսական շերտում հումուսի պարունակությունների չափում տարեկան մեկ անգամ պարբերականությ. | |
| 3. Թափոնների գոյացում | Թափոնների տեղափոխում վերամշակում իրականացնող ընկերությունների տարածք | <ul style="list-style-type: none"> - Կնքել պայմանագրեր վերամշակում իրականացնող ընկերությունների հետ | <ul style="list-style-type: none"> - Բացառվել է թափոնների կուտակումը այդ նպատակով չհատկացման վայրերում |


Գրականություն

1. «Հիդրոոդերևութաբանության և մոնիտորինգի կենտրոն» ՊՈԱԿ -ի տվյալներ, 2021թ.
2. Почвы Армянской ССР. Ред./ Р.А. Эдилян, Г.П. Петросян, Н.Н. Розов. Ереван: “Айастан”, 1976 г.
3. Հայաստանի բույսերի Կարմիր Գիրք.– 2010թ.
4. Հայաստանի կենդանիների Կարմիր Գիրք.– 2010թ.
5. Флора Армении / под ред. А.Л.Тахтаджяна. – Ереван: изд-во АН Арм ССР
6. Животный мир Армянской ССР. Даль С.К ,1954
7. “Растительность Армянской ССР”. Магакьян А.К.
8. “Флора, растительность и растительные ресурсы Армении”, Институт ботаники НАН РА Армянское ботаническое общество. Ереван
9. “Дикорастущие сЪедобные растения Армении”. А.П. Тер-Восканян, Ученые записки Ереванского государственного института.
10. “Цветущие уголки биоразнообразия”, FAO,
<http://www.fao.org/3/i1687r/i1687r08.pdf>
11. ՀՀ Արարատի մարզպետարանի պաշտոնական կայք
12. Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտեի պաշտոնական կայք, Արարատի մարզը թվերով

Հայցվող տարածքի կոորդինատները ArmWGS-84 համակարգով

1. 4429790.3371, 8451381.8960
2. 4429947.6593, 8451138.2517
3. 4429512.9094, 8450813.3073
4. 4429259.7077, 8451048.6700
5. 4429381.2671, 8451137.3594
6. 4429459.3045, 8451194.2953
7. 4429506.8763, 8451229.0036
8. 4429527.5736, 8451267.9053
9. 4429560.3480, 8451329.6820
10. 4429790.3371, 8451381.8960

Արարատի մարզ
Նորամարզ համայնք
Հատված կադաստրային քարտեզից
Կադաստրային ծածկագիր՝ 03-068-0406-0022
Մասշտաբ 1: 5000



| Կոորդինատներ | | |
|--------------|--------------|--------------|
| | X | Y |
| 1 | 8451381.8980 | 4429790.3371 |
| 2 | 8451138.2517 | 4429947.6593 |
| 3 | 8450813.3073 | 4429512.9094 |
| 4 | 8451048.6700 | 4429259.7077 |
| 5 | 8451137.3594 | 4429381.2671 |
| 6 | 8451194.2953 | 4429459.3045 |
| 7 | 8451229.0036 | 4429506.8763 |
| 8 | 8451267.9053 | 4429527.5376 |
| 9 | 8451329.6820 | 4429560.3480 |



սպասարկման գրասենյակ

Կ.Տ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՎԿԱՅԱԿԱՆ

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏԱՄԱՐ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ



Կադաստրի կոմիտե

Սույն վկայականով հաստատվում է 21 հոկտեմբերի 2021 թվականին գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական մատյանում կատարված անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը հետևյալ տվյալներով.

1. ԳՐԱՆՑՎԱԾ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍՈՒԲՅԵԿՏ(ՆԵՐ)

ԱՐՄԵՆ ՄԱՆՈՒԿՅԱՆ ՍԱՄՎԵԼԻ

2. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԸ ԵՎ ԱՆՎԱՆՈՒՄԸ

Մարզ Արարատ, համայնք Նորամարզ

3. ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԻՄՔ ՀԱՆԴԻՍԱՑԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

Առուվաճառքի պայմանագիր՝ 15.10.2021թ. թիվ 5465

4. ՀՈՂԱՄԱՍԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

Կադաստրային ծածկագիրը՝ 03-068-0406-0022

Մակերեսի չափը (հա)՝ 20

Նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական

Գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ Արոտավայր, Խոտհարք

Գրանցված իրավունքի տեսակը՝ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՎԿԱՅԱԿԱՆ N 21102021-03-0080, գաղտնաբառ՝ HHBK3KINJL8J

Փաստաթղթի իսկությունը և վավերանկախությունը կարող է ստուգվել Կադաստրի կոմիտեի www.e-cadastre.am կայքէջի միջոցով

5. ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

- 1) Նպատակային նշանակությունը՝
- 2) Բնութագրերը ըստ առանձին շինությունների՝

| Հ/Հ | Կադաստրային ծածկագիր | Տեսակ | Մակերես | Գրանցված իրավունքի տեսակ |
|-----|----------------------|-------|---------|--------------------------|
| | | | | |
| | | | | |
| | | | | |
| | | | | |
| | | | | |

Լրացուցիչ նշումներ և տեղեկություններ

Արոտավայր՝ 2.07818հա, Խոտհարք՝ 17.92182հա

Գրանցումը իրականացնող պաշտոնատար անձի անունը, ազգանունը՝ ԳԵՎՈՐԳ ՄԽԻԹԱՐՅԱՆ

Ջբաղեցրած պաշտոնը՝ Անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանման անշարժ գույքի ավագ ռեգիստր

ՎԿԱՅԱԿԱՆ N 21102021-03-0080, գաղտնաբառ՝ HHBK3KINJL8J

Փաստաթղթի իսկությունը և վավերականությունը կարող է ստուգվել Կադաստրի կայքի միջոցով
www.e-cadastre.am կայքի վեբ-միջոցով

Էջ 2/2



Հավելված 3.

(Էսքիզային հատակագիծ)

